

Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ  
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ  
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)

ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



*Change the world with Science*

*Փոխենք աշխարհը գիտությամբ*

2022 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	3
ԱԱԳԼ բաժանմունքների գիտական գործունեության հաշվետվություն .....	7
Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոն (Տեսական Բաժանմունք).....	7
Փորձարարական ֆիզիկայի բաժանմունք .....	16
Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին.....	24
Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոն.....	28
Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժին .....	30
Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժին.....	35
Հաշվողական ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաներ բաժնի (ՀՖՏՏ).....	38
Քվանտային տեխնոլոգիաների բաժին.....	38
Կադրային տվյալներ .....	42
Տեղական և միջազգային համագործակցություն .....	46
Գործուղումներ.....	50
Նոր և ընթացիկ դրամաշնորհային ծրագրեր .....	58
Մասնակցություն գիտաժողովներին, աշխատաժողովներին և սեմինարներին.....	65
Կազմակերպված միջոցառումներ.....	73
Կրթական համակարգն ԱԱԳԼ-ում.....	76
Հասարակայնության հետ կապեր և լրատվություն .....	79
ԱԱԳԼ ենթակառուցվածքի զարգացում, վերազինում և արդիականացում .....	89
Ձեռքբերված (այդ թվում՝ նվիրատվություն) սարք-սարքավորումներ, գործիքներ, նյութեր.....	90
Տեխնիկական սպասարկման խումբ N 500/4-1ստբ.....	95
Գիտական հոդվածների ցանկ .....	96

2022 թվականին «Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամում (այսուհետ՝ ԱԱԳԼ) իրականացվել են հետազոտություններ փորձարարական և տեսական ֆիզիկայի, կիրառական, միջուկային ֆիզիկայի, տիեզերական ճառագայթների, աստղաֆիզիկայի և կոսմոլոգիայի բնագավառներում հետևյալ հիմնական ուղղություններով.


- Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա (Տարրական մասնիկների և միջուկային Ֆիզիկայի տեսություն, Քվանտային Քրոմոդինամիկա, Նեյտրինային Ֆիզիկա),
- Դաշտի քվանտային տեսություն,
- Լարերի տեսություն, վիճակագրական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ,
- Քվանտային տեխնոլոգիաներ, քվանտային ֆիզիկա, կոնդեսացված միջավայրերի և ճառագայթման ֆիզիկա,
- ԼՈՒԷ-75 էլեկտրոնային գծային արագացուցչի արդիականացում,
- Պրոտոնային C18/18 ցիկլոտրոնի հազեցվածության բարձրացում,
- Հետազոտություններ CERN միջազգային կենտրոնում (LHC),
- Հետազոտություններ Jefferson Lab-ի A, B, C և D փորձարարական սրահներում,
- Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրում (HESS և CTA),
- Մասնակցություն EIC համագործակցության աշխատանքներին,
- Ռեալ և վիրտուալ ֆոտոններով միջուկների ճեղքման և ֆրագմենտացիայի ուսումնասիրություններ,
- Հետազոտություններ նյութագիտության ոլորտում,
- 18 ՄԷՎ էներգիայով պրոտոնային և 3.5 ՄԷՎ էներգիայով էլեկտրոնային փունջերով հարուցված երևույթների ուսումնասիրությունը սիլիցիումի բյուրեղներում,
- Հիդրոթերմալ միկրոալիքային մեթոդով սինթեզված սիլիկատային նյութերի ֆիզիկաօպտիկական հատկությունների կոմպլեքս ուսումնասիրում,
- Փնջի պրոֆիլի չափման նպատակով հիմնավորված, նախագծված և արտադրված է նոր տեսակի լարային մոնիտորներ,
- Պերովսկիտային նյութերի սինթեզ և օպտիկական հատկությունների ուսումնասիրում,
- Գրաֆենային հիմքով պերովսկիտային արևային բջիջների ստացում և ուսումնասիրում,
- Ռադիոկենսաբանական հետազոտություններ ԱՐԵԱԼ արագացուցչի էլեկտրոնային փնջի վրա,
- Գեոդեզիական հոսքերի հիպերբոլականություն,
- Հաբլի լարվածություն, դիտողական այլ անոմալիաներ, մոդիֆիկացված գրավիտացիա,
- Գալակտիկական մութ հալոները ըստ Պլանկ արբանյակի միկրոալիքային տվյալների,
- Արհեստական բանականություն, մեքենայական ուսուցման մեթոդներ աստղաֆիզիկական տվյալների վերլուծությունում,
- Գերնոր աստղեր և գալակտիկաների մորֆոլոգիա, դինամիկա,
- Մթնոլորտում բարձր էներգիայի ֆիզիկայի համար (HEAP),
- Բժշկական իզոտոպների արտադրության տեխնոլոգիաների և սարքավորումների մշակում, արտադրություն: Մասնավորապես աշխատանքներ են տարվել ռադիոակտիվ իզոտոպների հետազոտման ուղղությամբ՝  $^{99m}\text{Tc}$ ,  $^{67}\text{Ga}$ ,  $^{68}\text{Ga}$  և  $^{64}\text{Cu}$ ,

- Հաշվողական համակարգերի վերազինում, ծրագրային փաթեթների սպասարկում, թարմացում և նոր հաշվողական ծրագրերի տեղադրում,
- Խոշոր միջազգային համագործակցություններում (Belle II, մասնակիորեն Hermes) ստացված մեծաքանակ տվյալների մշակում, ֆիզիկական արդյունքների ստացում:

2022թ.-ին Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի կարևորագույն ձեռքբերումներից մեկն էր Քվանտային տեխնոլոգիաների բաժանմունքի ստեղծումը:

ԱԱԳԼ-ի աշխատակիցների թիվը 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 334 է, այդ թվում՝ գիտական անձնակազմ՝ 167, ճարտարագիտատեխնիկական անձնակազմ՝ 67, վարչասպասարկող անձնակազմ՝ 100: Գիտական աստիճան ունեցող աշխատակիցների թիվը 106 է, այդ թվում՝ 24 գիտությունների դոկտոր և 82 գիտությունների թեկնածու: Պրոֆեսորի կոչում ունի 8 աշխատակից:

Հաշվետու ժամանակահատվածում ԱԱԳԼ-ն գրանցել է շոշափելի արդյունքներ գիտական համագործակցությունների, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղություններով: Այս մասին են վկայում գիտաշխատողների կողմից գիտական միջազգային բարձր ազդեցության գործակցով ամսագրերում 250 հոդվածի տպագրությունը, միջազգային գիտաժողովների մասնակցությունը, կազմակերպված գիտական միջոցառումները, գիտական մասշտաբալիս և լոկալ սեմինարները և այլն:



Նկար 1

Տարի	2019 թ.		2020 թ.		2021 թ.		2022 թ.	
	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.
Հայաստան	1273	25800	1142	26078	959	25743	982	26300
ԱԱԳԼ	411	17600	325	17648	251	17251	192	17400
%	32	68	28	68	26	67	20	66

### Աղյուսակ 1

Ակնհայտ է, որ գիտական գործունեության առաջխաղացմանը մեծապես նպաստում են միջազգային և տեղական համագործակցությունները: ԱԱԳԼ-ն ընդհանուր առմամբ ունի 70 և ավել համագործակցություն, որոնց թվում են նաև միջազգային խոշորագույն գիտափորձեր՝ CERN, JLAB, DESY, KEK (Belle 2), HESS, MAGIC, NICA, EIC և դրանց բաղադրիչ մաս կազմող համագործակցություններ: Նշենք, որ հետևողական աշխատանքի շնորհիվ 2022 թվականին ընդլայնվել են մի շարք տեղական և միջազգային համագործակցություններ՝ համատեղ կրթական ծրագրեր իրագործելու նպատակով:

2022 թվականին մոտ 120 գործուղում է իրականացվել, որոնց նպատակն է եղել ընթացիկ համագործակցությունների շրջանակներում համատեղ աշխատանքների իրականացումն ու գիտափորձերի մասնակցությունը, ստաժավորումը, ուսանողների և երիտասարդ մասնագետների վերապատրաստումը և այլն: Գործուղման հիմնական երկրներն են՝ Շվեյցարիա (Շնն), Ֆրանսիա (Գրենոբլ, Դիժոն), Իտալիա (Սալենտո, Հռոմ, Տրիեստ), Իսրայել (Թել Ավիվ), Գերմանիա (Սյունխեն), Բուլղարիա (Բիլթան), Հունաստան (Քորֆու), ԱՄՆ (Նյու Պորտ Նյուզ, Նոտր Դամ, Քեմբրիջ, Մերիլենդ), ՌԴ (Դուբնա, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա):

ԱԱԳԼ գիտական գործունեության բարձր մակարդակի և գիտաշխատողների զգալի աշխատանքների շնորհիվ շարունակվել է ակտիվ մասնակցությունը տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին:

Գիտության կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհների մրցույթներում ֆինանսավորում ստացած ԱԱԳԼ նախագծերը՝

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում եւ (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ:
- Գիտական գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» մրցույթ:
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթ:
- «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության» մրցույթ:
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» մրցույթ:

Հաջողություններ են գրանցվել նաև տեղական ոչ պետական և միջազգային դրամաշնորհների տրամադրման մրցույթներում:

Երիտասարդների թվի կտրուկ ավելացումն ԱԱԳԼ-ի ռազմավարության կարևորագույն նպատակներից է: Իրականացվել է թեկնածուական ատենախոսության 4 պաշտպանություն, 2 մագիստրոսական թեզի պաշտպանություն: ԱԱԳԼ են ընդունվել 5 ասպիրանտ և հայցորդ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ճանաչողական շրջայցեր դպրոցականների և ուսանողների համար: Բացի մագիստրատուրայի ընթացիկ ներքին և արտագնա դասախոսություններից կազմակերպվել են նաև լրացուցիչ դասախոսություններ, հանրային միջոցառումներ: Սա կրելու է շարունակական բնույթ:

Ռազմավարական նշանակություն ունի նաև գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքների արդիականացումը և զարգացումը: ԱԱԳԼ-ն այս ուղղությամբ ևս խոստումնալից առաջընթաց է գրանցել: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել գիտական սարք-սարքավորումներ, գրասենյակային կահույք և այլն

Ենթակառուցվածքների արդիականացման և տեխնոլոգիական վերազինման ամենաակնառու ձեռքբերումները հանդիսանում է երկու խոշոր լաբորատորիաների գիտական սարքավորումների համալրումը (1000-դասի մաքուր սենյակ ու Առաջնակարգ դետեկտորներով լաբորատորիա):

2022 թվականին ԱԱԳԼ-ն ունեցել է հետևյալ դրամական ներհոսքերը.

Միջազգային դրամաշնորհ	52,370,486.15
Արտաբյուջետային ներհոսքեր	153,818,973.40
<b>ԿԳՄՄՆ</b>	<b>2,753,400.00</b>
Նվիրատվություն	3,784,556.60
Բազային ֆինանսավորում	767,320,800.00
<b>Գիտկոմից մուտքեր</b>	<b>561,657,000.00</b>
Կրթաթոշակ (ասպ., մագ.)	3,138,500.00
<b>Ընդհանուր</b>	<b>1,544,843,716</b>

### Աղյուսակ 2

Բազային ֆինանսավորման մասնաբաժինը 2022թ.-ի ընդհանուր մուտքերի մեջ	49.7 %
Բազային ֆինանսավորման մասնաբաժինը 2022թ.-ի մուտքերի մեջ՝ առանց գիտկոմի	78 %

### Աղյուսակ 3

ԱԱԳԼ-ն որդեգրել է գիտության հանրայնացման խթանման քաղաքականություն և իր գիտական գործունեության տպավորիչ արդյունքների շնորհիվ հաշվետու տարվա ընթացքում մշտապես եղել է մամուլի ուշադրության կենտրոնում: Ասուլիսների հրավեր և մասնակցություն, Հարցազրույցների հրավեր և մասնակցություն, Մամուլը մեր մասին, Նկարահանված հոլովակներ ինստիտուտի գիտական ձեռքբերումների մասին, Կազմակերպված սեմինարների լուսաբանում և այլն:

ԱԱԳԼ գիտական ուղղություններով բաժանմունքների մանրամասն հաշվետվությունները, ինչպես նաև ներածական բաժնում տրված քանակական ցուցանիշների մեկնաբանությունները ներկայացված են ստորև:





Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոնի (Տեսական Բաժանմունք)

Ղեկավար՝ Ռ. Մանվելյան

Հաշվետու ժամանակահատվածում Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոնի (Տեսական Բաժանմունք) հետազոտությունների իրականացման

հիմնական ուղղություններն են եղել՝

- Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա (Տարրական մասնիկների և միջուկային Ֆիզիկայի տեսություն, Քվանտային Քրոմոդինամիկա, Նեյտրինային Ֆիզիկա),
- Դաշտի քվանտային տեսություն,
- Լարերի տեսություն, վիճակագրական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ,
- Կոնդենսցված միջավայրերի և ճառագայթման ֆիզիկա,
- Քվանտային ֆիզիկա և քվանտային տեխնոլոգիաներ:

Այդ ուղղություններով 2022 թվականին կատարվել են արդյունավետ հետազոտություններ և ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները՝

**I. Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա**

Մեր հիմնական նպատակն է հաշվարկել  $\mathbb{F}\mathbb{F}\mathbb{T}$  ուղղումները  $\bar{B} \rightarrow X_s \gamma$  և  $\bar{B} \rightarrow X_s \gamma \gamma$  տրոհումների, ինչպես նաև  $B_s - \bar{B}_s$  սիստեմի խառնման պարամետրերի համար: Մենք ստանում ենք ֆիզիկական մեծությունների բարելավված կանխատեսումներ՝ փորձարարական տվյալների հետ համեմատելու համար: Արդյունքները կարող են օգտագործվել նոր ֆիզիկայի վրա սահմանափակումներ ստանալու համար:

Արդյունքները ստացվել են լայն միջազգային համագործակցության շնորհիվ, մասնավորապես՝ պրոֆ. Գրոյբի և պրոֆ. Նիերստեի հետ:

Հաշվառվել են՝

- 1)  $\bar{B} \rightarrow X_s \gamma$ :  $\alpha_s^2$  ուղղումները c-քվարկի ֆիզիկական (ոչ գրո) զանգվածի համար:
- 2) Կրկնակի դիֆերենցիալ լայնությունը  $\bar{B} \rightarrow X_s \gamma \gamma$  տրոհման համար  $\alpha_s$  կարգում:
- 3)  $\alpha_s^2 N_f$  ուղղումներ  $B_s - \bar{B}_s$  խառնման համար թույլ օղակում c-քվարկի ոչ գրոյական զանգվածի համար:

Ա. Կոցինյանն ակտիվորեն մասնակցել է CLASS և COMPASS միջազգային համագործակցություններում, ինչպես նաև նախաձեռնել է փորձարարական արդյունքների մեկնաբանման տեսական հիմքի պատրաստումը:

Մասնավորապես՝

- 1) Չբևեռացված պրոտոնից բևեռացված լեպտոնի կիսաբնդորկուն խորը ոչ առաձգական ցրման պրոցեսում (SIDIS) երկու հաղորդների արտադրության համար (մեկը ընթացիկ մասնատման շրջանում, մյուսը՝ թիրախային մասնատման շրջանում) Կոտրվածքի Ֆունկցիայի ֆորմալիզմի վրա հիմնված կանխատեսումները առաջին անգամ փորձարարական են. հաստատվել է JLab-ում:

2) Կրկնակի J/psi արտադրական հոդվածն այժմ գտնվում է մրցավարների մեկնաբանությունների պատասխանների պատրաստման փուլում:

Տեսական Բաժանմունքի առաջատար գիտաշխատող Ա. Բոաննիայանը կատարել է աշխատանքներ և որպես տեսաբան ունեցել է ներդրում նեյտրինային ֆիզիկայի հետ կապված էքսպերիմենտալ համագործակցություններում (JUNO, DUNE):

Տեսական Բաժանմունքի առաջատար գիտաշխատող Ն. Իվանովը պաշտոնապես հանդիսանում էմ ԱՄԳԼ-ի ներկայացուցիչը միջազգային SPD-NICA ծրագրում: Ակտիվ մասնակցություն է ունեցել CDR SPD NICA ստեղծման պրոցեսում: Պատրաստել է Հուշագիր (Memorandum of Understanding) ԱՄԳԼ-ի և JINR-ի միջև, ըստ որի մեր փորձարարները կմասնակցեն էլեկտրոնագնիսական կալորիմետրի ստեղծմանը և տեղադրմանը SPD-NICA գիտափորձի համար: Կողմերն այս Հուշագիրը ստորագրել են 2022 թ. հունիս ամսին: 24.02.2022 թ. կազմակերպվել է առցանց սեմինար կոլաբորացիայի համար՝ նվիրված ԱՄԳԼ-ի մասնակցությանը SPD գիտափորձում: Ն. Իվանովը և Ա. Կոցինյանը SPD-NICA կոլաբորացիայի միջազգային խորհրդի անդամ են:

## **II. Դաշտի քվանտային տեսություն, լարերի տեսություն, մաթեմատիկական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ**

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է Վաժելի ունիվերսալության տեսությունը՝ Լիի պարզ հանրահաշիվների նկարագրման ունիվերսալ մեթոդի տարբեր ասպեկտները, ինչպես նաև այդ մեթոդի կիրառությունները Չերն-Սայմոնսի տեսությունում: Մասնավորապես՝

ա) Կատարվել է բոլոր հայտնի ունիվերսալ քվանտային չափողականությունների ուսումնասիրություն՝ օգտվելով Wolfram Mathematica ծրագրի “LieART” հաստուկ փաթեթից: Արդյունքում նկատել, այնուհետև ապացուցել ենք այդ բանաձևերի՝ այսպես կոչված գծորեն լուծելիության հատկությունը: Հանգել ենք ընդհանուր պնդման այն մասին, որ Լիի պարզ հանրահաշիվների բոլոր հայտնի ունիվերսալ քվանտային չափողականությունները Վաժելի աղյուսակի բոլոր կետերում գծորեն լուծելի են:

բ) Ձևակերպել ենք ունիվերսալ չափողականությունների միակության խնդիրը: Դրա շրջանակներում առաջ ենք քաշել ունիվերսալ բանաձևերի միակության հարցի երկրաչափական վերաձևակերպման միտքը և հաշվել ենք երեք և չորս չափանի ոչ-միակության արտադրիչներ՝ օգտվելով ուղիղների ու կետերի հայտնի կոնֆիգուրացիաների հատկություններից: Խնդրի վերջնական լուծման նպատակով կապ ենք հաստատել երկրաչափական կոնֆիգուրացիաներով զբաղվող առաջատար մասնագետ՝ “University of Alaska Fairbanks” համալսարանի մաթեմատիկայի պրոֆեսոր Լի Բերմանի հետ: Համագործակցությունն ընթացքի մեջ է:

գ) Կատարել ենք Լիի հանրահաշիվների տեսությունում հայտնի Կաց-Պետերսոնի բանաձևի թվային ուսումնասիրություն: Արդյունքում կարողացել ենք այն ընդհանրացնել՝ ներմուծելով նոր «գոման» պարամետր: Այս ընդհանրացման հիման վրա դուրս ենք բերել գտված Չերն-Սայմոնս տեսության վիճակագրական գումարները բոլոր տիպի պարզ Լիի հանրահաշիվների համար: Դրանից հետո մեզ հաջողվել է ստացված վիճակագրական գումարները ձևափոխել ունիվերսալ տիպի արտահայտության տեսքի, բոլոր պարզ՝ ներառյալ ոչ միաթել տիպի հանրահաշիվների դեպքում: Դա կարևոր ու հիմնական քայլ է Չերն-Սայմոնս/տոպոլոգիական լարեր դուալությունների ուսումնասիրման գործում, քանի որ հենց



մեր ստացած տեսքի արտահայտություններն են, որ իրենց կառուցվածքով համընկնում են տոպոլոգիական լարերի՝ Գոպակումար-Վաֆա տեսքի վիճակագրական գումարների հետ:

դ) Բոլոր դասական պարզ տրամաչափական խմբերի համար գտված Չերն-Սայմոնս տեսության վիճակագրական գումարները ներկայացրել ենք ընդհանրացված սինուս ֆունկցիաների տեսքով: B,C տիպի հանրահաշիվների համար այս ներկայացումը նոր է: Ուսումնասիրել ենք ստացված արտահայտությունների ու հնարավոր գտված տոպոլոգիական լարերի վիճակագրական գումարների միջև հարաբերակցությունները: Մասնավորապես, գտված տեսության համար վերջնական արտահայտության մեջ առաջանում է մի արտադրիչ, որը, ենթադրաբար, համապատասխանում է ոչ օրիենտացվող մակերևույթներին: Բացի դրանից, ներմուծել ենք նոր ներկայացում՝ տոպոլոգիական լարերի վիճակագրական գումարի հաստատուն արտապատկերում բաղադրյալի համար:

Շարունակվել է փոխադրող բարձր սպինով (FU) տեսությունների ուսումնասիրությունը հարթ և AdS տարածություններում՝

ա) ելնելով համաչափական օրենքներից կառուցվել է 3 կետանի կորելացիոն ֆունկցիան պահպանվող կոնֆորմ հոսանքների համար և ուսումնասիրվել է բարձր սպինով դաշտերի տրամաչափային սիմետրիաներն ու քվանտային վարքը:

բ) առաջին անգամ հետազոտվել է բարձր սպինով հոսանքների հետքի քվանտային անոմալիայի առաջացումը և նրա կառուցվածքը:

Ուսումնասիրվել են  $W_3$  համաչափությամբ մինիմալ կոնֆորմ դաշտի տեսության հարևան մոդելներ միացնող վերանորմավորումների խմբի (VFU) հոսքը: Հաշվարկելով օպերատորային հանրահաշիվի մի խումբ կառուցվածքային գործակիցներ, ՎԽ ինվարիանտ երեք տարբեր դասեր կազմող դաշտերի համար, գտել ենք անոմալ չափերի մատրիցները: Առաջին դասի յուրաքանչյուր բազմություն բաղկացած է մեկ հիմնական դաշտից, երկրորդը՝ երեք հիմնական դաշտից, մինչդեռ երրորդ դասի բազմությունները պարունակում են վեց հիմնական և չորս երկրորդական դաշտեր: Անկյունագծային տեսքի ենք բերել անոմալ չափերի համապատասխան մատրիցները, ինչը հնարավորություն է տվել բացահայտորեն հաշվելու ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր դաշտերի միջև խառնման գործակիցները՝ երկրորդ դասի համար: Երկրորդական դաշտերի երեք կետային ֆունկցիաներն ուսումնասիրելիս հանդիպել ենք հետաքրքիր երևույթի, այն է՝ հոլոմորֆ հակա-հոլոմորֆ ֆակտորացման հատկության խախտում, որը տեղի չի ունենում բացառապես Վիրասորոյի համաչափությամբ մինիմալ մոդելներում: Ավելին, դիտարկվող խտորումը պահպանում է  $W$  ձևափոխության մի որոշակի ենթախումբ: Մենք բացահայտորեն արտածել ենք համապատասխան պահպանվող հոսանքը, որի օգնությամբ ներմուծել ենք անոմալ  $W$ -կշիռների հասկացությունը, ինչը հանդիսանում է անոմալ չափերի մատրիցի անալոգը: Այս մեծության համար ստացել ենք բանաձև՝ արտահայտված օպերատորային հանրահաշիվի կառուցվածքային գործակիցների միջոցով: Այն մեզ թույլ է տվել բացահայտորեն հաշվարկել անոմալ  $W$ -կշիռները: Նույն վերանորմավորման հոսքն ուսումնասիրել ենք նաև ՎԽ դոմենային պատի մեթոդով և ցույց տվել, որ այն հանգեցնում է խտորումային մոտեցման հետ համաձայնեցված արդյունքների:

Օգտագործելով կոնֆորմ դաշտի տեսությունը և տեղայնացման տեխնիկան՝ ուսումնասիրել ենք սկայար ալիքների տարածումը գրավիտացիոն ֆոնին, որը նկարագրվում է Շրոդինգերի եզակիություններ պարունակող հավասարումներով: Եզակի կետերից մեկում ալիքային ֆունկցիայի ասիմպտոտից վարքը այլ եզակի կետում վարքի հետ կապը ճշգրտորեն արտահայտված է ԿԴՏ միաձուլման (Fusion) և հյուսման (Braiding) գործակիցների միջոցով: Ստացված արդյունքները կիրառված են սև խոռոչների միաձուլման արդյունքում առաջացող

գրավիտացիոն ալիքների քվադր-նորմալ մոդերի, մակընթացային արձագանքների և ուժեղացման գործակիցների ուսումնասիրման համար: Առաջարկել ենք նաև դինամիկ Լովի թվերի սահմանում գրավիտացիայում:

Ուսումնասիրվել է Էյլերի հոլը, որը ձևավորված է որպես համակարգ կոմպլեքս պրոյեկտիվ հարթության վրա, որը խաղում է փուլային տարածության դեր, այսինքն՝ որպես միաչափ մեխանիկական համակարգ: Այնուհետև առաջարկել ենք դրական Համիլտոնյանով ընդհանուր միաչափ համակարգերի սուպերսիմետրիզացման սխեմա, որը տալիս է  $N=2k$  սուպերսիմետրիկ Համիլտոնյանների a-priori ինտեգրվող ընտանիք՝ պարամետրացված կամայական  $N/2$  իրական ֆունկցիաներով: Առաջարկվեց  $su(1, N|M)$  – սուպերկոնֆորմ մեխանիկաներ, որոնք ձևակերպված են կոմպլեքս պրոյեկտիվ տարածության ոչ կոմպակտ սուպերանալոգի վրա: Ներկայացվել են կանոնիկ կոորդինատներ, որոնք համապատասխանում են սուպերկոնֆորմ մեխանիկայի «շառավղային» և «անկյունային» մասերի հայտնի տարանջատմանը: Կապելով «անկյունային» կոորդինատները անկյուն-գործողություն փոփոխականների հետ՝ մենք ցույց տվեցինք, որ առաջարկվող սխեման թույլ է տալիս կառուցել գերինտեգրելի համակարգերի լայն դասի սուպերկոնֆորմալ ընդարձակումներ: Առաջարկեցինք նաև դինամիկ սուպերսիմետրիայով օժտված սուպերինտեգրվող օսցիլյատորի և Կուլոնի համակարգերի ընդհանրացումներ՝ և պարզեցինք, որ օսցիլյատորային համակարգը, ի տարբերություն Կուլոնի համակարգի, ունի դեֆորմացված Պուանկարեի սուպերսիմետրիա:

Ինտեգրվող համակարգերը մոտ հորիզոնների երկրաչափությունների շրջակայքում հետաքրքիր են ինչպես աստղաֆիզիկական, այնպես էլ տեսական պատճառներով: Մենք ուսումնասիրել ենք գոնդի մասնիկի և Քլայն-Գորդոնի դաշտի ինտեգրելիությունը էքստրեմալ Մայերս-Պերիի սև խոռոչի հորիզոնի մոտ:

Ուսումնասիրվել է բևեռացված լույսի տարածումն իզոտրոպ բեկման ցուցիչով միջավայրում: Ցույց է տրվել, որ բևեռացումը խախտում է միջավայրի լրացուցիչ համաչափությունները: Այնուհետև առաջարկվել է բևեռացումից կախված բեկման ցուցիչ կառուցելու սխեմա, որը վերականգնում է սկզբնական պրոֆիլի բոլոր համաչափությունները: Առաջարկվող սխեման պատկերված է Լյունեբուրգի և Մաքսվելի ձկան աչքի օրինակների վրա:

Առաջարկվել է Ruijsenaars-Schneider (RS) մոդելի պարզ ձևակերպում, որը հիմնված է ոլորված Պուքստոնի փակագծերի վրա, որոնք սովորաբար օգտագործվում են արտաքին մագնիսական դաշտում շարժվող մասնիկները նկարագրելու համար: Այնուհետև, ելնելով այս ձևակերպումից, առաջարկվում է դինամիկ երկչափ Պուանկարեի համաչափություն ունեցող համակարգ, որը նկարագրվում է նույն Համիլտոնյան և ոլորված Պուաստոնի փակագծերով, որոնք համապատասխանում են գրեթե կամայական մագնիսական դաշտում շարժմանը:

Մեր հետագա ուսումնասիրություններում ցույց է տրվում, որ կոմպլեքս հիպերերկրաչափական ֆունկցիան, որը նկարագրում է 6j- սիմվոլները  $SL(2, \mathbb{C})$  խմբի համար, ստացվում է հատուկ սահմանում V-ֆունկցիայից, որը Էյլեր-Գաուսի հիպերերկրաչափական ֆունկցիայի էլիպսային անալոգն է: Այս ֆունկցիայի համար խառը տարբերություն-ռեկուրսիվ հարաբերությունները և սիմետրիայի որոշ ձևափոխությունները ստացվում են որպես էլիպսային հիպերերկրաչափական հավասարման սահմանային ձևերը: Միջանկյալ քայլերում առաջանում է ֆունկցիա, որը նկարագրում է 6j- սիմվոլները Ֆադդեևի մոդուլային դուբլի համար, և համապատասխան տարբերությունների հավասարումներն ու սիմետրիայի ձևափոխությունները: Նկարագրված է էլիպսաձև հիպերերկրաչափական հավասարման

ընդհանուր ռեդուկցիան կոմպլեքս հիպերերկրաչափական ֆունկցիայի մակարդակին: Արդյունքում ստացված հավասարումն ընդհանրացված է համիլտոնյան սեփական արժեքների խնդրի վրա նոր ռացիոնալ ինտեգրվող  $N$ -մարմնի համակարգերի համար, որոնք առաջանում են Ռուխսենարսի և Վան Դիեմենի էլիպսաձև մոդելների հատուկ ռեդուկցիայից: Ներկայացվել է կոմպլեքս գամմա ֆունկցիաների ինտեգրալների համար նոր հարաբերություններ: Ցույց է տրվել, որ էլնելով էլիպսային հիպերերկրաչափական ինտեգրալների հատկություններից և օգտագործելով որոշ սահմանային պրոցեդուրաներ, կարելի է ստանալ հիպերբոլիկ և կոմպլեքս գամմա ֆունկցիաների արտադրյալների ինտեգրալների համար մեծ քանակի նոր նույնություններ: Այս ինտեգրալներն ունեն վիճակագրային ֆունկցիաների ֆիզիկական մեկնաբանություն տարբեր տիպի դաշտի քվանտային տեսությունների դուալությունների համար տարբեր չափողականություններում, և համապատասխան սահմանային պրոցեդուրաները կարող են դիտվել որպես չափողականության ռեդուկցիա և մուլտիպլետի անջատում: Մենք ուսումնասիրում ենք հիպերբոլիկ հիպերերկրաչափական ֆունկցիա, որն իրենից ներկայացնում է Լիուվիլի դաշտի տեսությունը միաձուլման մատրիցի ամենակարևոր մասը՝ պարաֆերմիոնային ընդհանրացումը: Մենք ցույց ենք տալիս, որ պարաֆերմիոնային հիպերերկրաչափական ֆունկցիան կարող է ստացվել նույնացված էլիպսային հիպերերկրաչափական  $V^{\wedge}(r)$ -ֆունկցիայից: Մենք ստանում ենք այս ընդհանրացված հիպերերկրաչափական ֆունկցիայի սիմետրիայի հատկությունները: Այս ֆունկցիան  $r=2$  դեպքում տալիս է սուպերսիմետրիկ հիպերերկրաչափական ֆունկցիա, որը  $N=1$  սուպեր Լիուվիլի դաշտի տեսության միաձուլման մատրիցի ամենակարևոր մասն է: Այս դեպքի համար սիմետրիայի առնչությունները տալիս են Տեշներ-Վարտանովի բանաձևի սուպերսիմետրիկ ընդհանրացումը:

**III. Քվանտային ֆիզիկա, վիճակագրային ֆիզիկա, տոպոլոգիական մեկուսիչներ, SPT փուլեր, քվանտային Հոլի էֆֆեկտ, եռաչափ ինտեգրելիություն, ոչ-կրիտիկական լարեր, ուժեղ փոխազդեցություններ, կիրառական մաթեմատիկա, կենսաֆիզիկա**

Հաշվետու ժամանակահատվածում ըստ ծրագրի կատարվել են հետևյալ աշխատանքները՝

ա) Մենք դիտարկել ենք ոչ ստացիոնար քվանտային մոդելների մի շարք: Ցույց ենք տվել, որ դրանց դինամիկական կարելի է ուսումնասիրել՝ օգտագործելով Կնիժնիկ-Չամոլոդչիկովի (KZ) հավասարումների կապերը՝ համապատասխան դաշտի տեսությունների կորելյացիոն ֆունկցիաների համար: Մեր կողմից հատկապես դիտարկվում է Wess-Zumino-Novikov-Witten-ի սահմանային մոդելը, որտեղ առաջնային դաշտերի կորելյացիոն ֆունկցիաների հավասարումները սահմանվում են KZ հավասարումների ընդլայնմամբ և ուսումնասիրում ենք դինամիկ համակարգերի հետ նրանց կապերը: Որպես առաջարկվող մեթոդի աշխատանքային օրինակ՝ ճշգրիտ լուծում ենք տալիս դինամիկ համակարգին, որը երկաստիճան Լանդաու-Չեններ համակարգի հատուկ բազմաստիճան ընդհանրացումն է (Դեմկով-Օշերով մոդել): Մեթոդը կարող է օգտագործվել տարբեր բազմամակարդակ համակարգերում ոչ հավասարակշռության դինամիկական ուսումնասիրելու համար համապատասխան KZ հավասարումների լուծումներն ուսումնասիրելով:

բ) Բացահայտել ենք խորանարդ հավասարումների նոր լուծումներ  $R$ -մատրիցի համար, որոնք ի լրումն Կիտանի մոդելի, պարունակում են փոխազդեցություն: Գտել ենք ստացված մոդելների  $R$ -մատրիցի ֆերմիոնային ներկայացումը:

զ) Կառուցել ենք երեք վիճականոց Potts-մոդելի պարամագնիսներ բաց եզրերով եռանկյուն վանդակի վրա պաշտպանված  $Z_3 \times Z_3 \times Z_3$  և ավելի փոքր՝  $Z_3$  համաչափություններով: Ուսումնասիրում ենք բաց եզրերով մանրադիտակային մոդելները, քննարկում համապատասխան դաշտի կոնֆորմալ տեսությունները և դրանց կենտրոնական լիցքերը: Սրանք  $s = 1$  պարամագնիսների եզրային վիճակներն են, որոնք պաշտպանված են  $Z_3 \times Z_3 \times Z_3$  և  $Z_3$  համաչափություններով: Սրանք հանդիսանում են ազատ ֆերմիոնների XX մոդելի եզրին վիճակների անալոգիան, որը քննարկվել է Լևինի և Գուի կողմից սպին  $-1/2$ -ով  $Z_2$  Իզինգի պարամագնիսի համար: Մենք ցույց ենք տալիս, որ սպին-1 մագնիսներում կան բազմաթիվ տարբերակներ՝ ձեռք բերելու ինքնադուալ համիլտոնյաններ և առանց բաց եզրային վիճակներ: Այս մոդելները հիմք են հանդիսանում համաչափությամբ պաշտպանված մի շարք տոպոլոգիական փուլերի (SPT) իրականացման համար՝ պատուհան բացելով ոչ սովորական քվանտային կրիտիկականությունների ուսումնասիրության համար: Ուսումնասիրությունը կապ է հաստատում նաև քննարկվող և Հոլլի էֆֆեկտում սարահարթային անցումները նկարագրող եզրային վիճակների միջև:

դ) Մենք ներկայացնում ենք Լապլաս-Ռունգե-Լենցի վեկտորի Դանկլի տարբերակը, որը կապված է վերջավոր Կոքստերի խմբի հետ  $N$  չափում: Այս վեկտորը ընդհանրացնում է սովորական Լապլաս-Ռունգե-Լենցի վեկտորը և կոմուտացվում է Դանկլ-Կուլոն Համիլտոնյանի հետ, որը սահմանվում է որպես Դուկլի Լապլասյանով լրացուցիչ Կուլոնյան պոտենցիալի առկայությամբ: Ուսումնասիրում ենք խնդրի համաչափության հանրահաշիվը և ցույց տալիս, որ այն ունի Պուանկարե-Բիրխտֆ-Վիտի հատկությունը: Կուլոնյան պոտենցիալի բացակայության դեպքում այս սիմետրիկ հանրահաշիվը ռացիոնալ Չերեդնիկի հանրահաշիվի ենթահանրահաշիվն է հանդիսանում: Ցույց ենք տալիս, որ այս հանրահաշիվի կենտրոնական քանոթը քառակուսի հանրահաշիվ է, որն իզոմորֆ է համապատասխան Դանկլի անկյունային մոմենտի հանրահաշիվի կենտրոնական քանոթին: Մա վերջինիս մեկնաբանություն է տալիս որպես Դանկլ-Կուլոն խնդրի թաքնված համաչափության հանրահաշիվ: Կալոջերոյի պոտենցիալի բացակայության դեպքում վերականգնվում է  $so(N+1)$  ունիվերսալ պարուրող հանրահաշիվը որպես Կուլոնյան խնդրի թաքնված համաչափություն: Մենք նաև կիրառում ենք Դանկլ-Լապլաս-Ռունգե-Լենցի վեկտորը՝ հաստատելու ընդհանրացված Կալոջերո-Մոզեր համակարգերի մաքսիմալ գերինտեգրելիությունը:

ե) Ուսումնասիրել ենք կառուցված  $Z_3$  համաչափությամբ պարամագնիսի եզրային  $1+1$  չափանի մոդելի սպեկտրի հատկությունները: Պարզել ենք, որ մոդելն ունի ինքնադուալության հատկություն, որը նշանակում է, որ եզրային մոդելը զանգված չունի: Ուսումնասիրել ենք նոր եզրային մոդելների բազմությունը և նրանց տոպոլոգիական դասակարգումը և թվային մեթոդով հաշվարկվել է նրանց կենտրոնական լիցքը: Ուսումնասիրվել են նաև կառուցված մոդելների ստատիստիկ/անիոնային հատկությունները, ինչպես նաև նրանց դերը տոպոլոգիական մեկուսիչների դեպքում:

Հաջորդիվ, հանգամանորեն ուսումնասիրվել են ջերմային ոչ դասական այն կորեյացիաները, որոնք քանակապես որոշվում են չորս քուբիթից բաղկացած քառակուսի շղթայի մեջ համընկնող խճճվածությամբ, տեղային քվանտային անորոշությամբ և քվանտային կոհերենտությամբ: Ուսումնասիրվել է Համիլտոնյանի պարամետրերի ազդեցությունը նշված զույգ քվանտային չափանիշների և հեռահաղորդման ճշգրտության վրա, և մանրամասն քննարկվել են ամենահետաքրքիր արդյունքները: Պարզվել է, որ անիզոտրոպ կարգավորումը հանգեցնում է ջերմային քվանտային կորեյացիայի և կոհերենտության, ինչպես նաև միջին ճշգրտության ուժեղացման մինչև առավելագույն

արժեքների հասնելը: Մենք համոզվել ենք, որ ջերմային վիճակի քվանտայինությունը հայտնաբերելու համար քվանտային կոհերենտությունն ավելի արդյունավետ չափանիշ է, քան համընկնումը և տեղային քվանտային անորոշությունը:

Թվայնորեն ուսումնասիրել ենք  $1/2$  սպին ունեցող երեք տեսակի ճյուղավորված շղթաների մագնիսական հատկությունները և ֆազային սպեկտրները մեկ միավոր բլոկում, որոնք բաղկացած են մեկ, երկու և երեք կողային սպիններից ներշղթայական փոխազդեցությամբ և միատարր միջշղթայական փոխազդեցությամբ արտաքին մագնիսական դաշտի առկայության դեպքում: Մագնիսական դաշտերի որոշակի տիրույթում այս շղթաների ցածր ջերմաստիճանի մագնիսացումն ունի աստիճանական բնույթ՝ ընդգծված սարահարթով, կախված ներշղթայական փոխազդեցության ուժից և տեսակից՝ ֆերոմագնիսական կամ հակաֆերոմագնիսական: Ցույց է տրվում, որ  $J1$  հակաֆերոմագնիսական միջշղթայական փոխազդեցության և  $J2$  ֆերոմագնիսական ներշղթայական փոխազդեցության դեպքում մոդելների մագնիսացումը ցույց է տալիս սահուն աճ առանց սարահարթի, ինչը ցույց է տալիս հեղուկի Լուտինգերի սպինին նման սպինի առկայությունը մինչև դրա հազեցվածության արժեքին հասնելը: Մյուս կողմից, երբ  $J1$ -ը ֆերոմագնիսական է, իսկ  $J2$ -ը՝ հակաֆերոմագնիսական, երկճյուղ շղթայի ցածր ջերմաստիճանի մագնիսացումը ցույց է տալիս միջանկյալ սարահարթ՝ հազեցվածության մագնիսացման կեսին, որը քվանտային սպինի հեղուկ փուլը բաժանում է երկու մասի: Երեք ճյուղերով շղթայի մագնիսացումն ունի երկու միջանկյալ սարահարթ և երկու հեղուկ քվանտային սպինային մաս: Մենք ցույց ենք տվել, որ մեկից ավելի կողային սպին ունեցող շղթաները իրենց հիմնական վիճակի փուլային դիագրամում ցույց են տալիս ճեղքերով փուլից դեպի առանց ճեղքերի սպինի հեղուկ փուլ Կոստերլից-Թուլեսի անցումը:

Ջերմային բացասականության օգնությամբ ուսումնասիրել ենք ամբողջ խճճվածության չափը՝ այսպես կոչված երկրաչափական  $\Pi_4$  միջին խճճվածությունը և հակաֆերոմագնիսական  $1/2$  սպինով XXX Հայգենբերգ մոդելի քառամիջուկային քառակուսի կլաստերի վրա ցիկլային չորս սպինների փոխազդեցությամբ: Մոդելը ներառում է երկու ամենամոտ հարևան փոխանակման զույգավորումներ՝  $J1$  և  $J2$  այնպիսին, որ  $J1 \gg J2$ : Երբ ցիկլային չորս սպինների փոխանակումը զրոյական է, ամբողջ խճճվածության  $\Pi_4$  առավելագույն արժեքը ձեռք է բերվում բավական ցածր ջերմաստիճաններում և համեմատաբար բարձր մագնիսական դաշտերում ( $B \approx J1$ ): Նաև  $J1$  փոխանակման զուգակցմամբ զույգ սպինների միջև առավելագույն երկկողմանի խճճվածությունը հնարավոր է բարձր ջերմաստիճանում և բարձր մագնիսական դաշտում: Այս քանակությունը կենդանի է մնում բավականաչափ բարձր ջերմաստիճանի և մագնիսական դաշտի բարձր արժեքների համար, որոնք համեմատելի են համապատասխան  $J1$  փոխանակման զուգակցման հետ: Չորս սպինի ցիկլային փոխանակման ոչ զրոյական արժեքը զգալիորեն մեծացնում է ամբողջ խճճվածության աստիճանը, մինչդեռ այն թուլացնում է երկկողմանի խճճվածության աստիճանը: Մենք ցույց ենք տվել, որ ամբողջ խճճվածությունը հասնում է անսովոր նվազագույնի ցիկլային չորս սպինի փոխանակման հատուկ պարամետրային տիրույթում գրեթե տասը կարգով փոքր, քան  $J1$ , որտեղ համակարգը գտնվում է քվանտային հակաֆերոմագնիսական վիճակում: Իրական համալիրը  $[Cu_4L_4(H_2O)_4](ClO_4)_4$ , որպես ուժեղ հակաֆերոմագնիսական քառակուսի միացություն, մեզ տալիս է փորձնական նմուշ՝ գնահատելու ամբողջ և երկմասային խճճվածությունների ուժը բավական բարձր ջերմաստիճանում: Ապացուցված է, որ այս համալիրի խճճվածության բացասականությունը դեռևս կախված է դիտարկված ցիկլային չորս սպինի փոխազդեցությունից, թեև դրա

մեծությունը զգալիորեն փոքր է  $J1$ -ից: Մենք գիտակցում ենք, որ մի քանի առանձին  $CuII4$  կոմպլեքսների միջոցով քվանտային տելեպորտացման հնարավորությունը տեղի կունենա բացառապես կրիտիկական արժեքից ցածր մագնիսական դաշտերի համար: Ապացուցված է նաև, որ ցիկլային չորս սպինի փոխանակման ուժեղացումը հանգեցնում է միջին հավատարմության նվազմանը: Ավելին, մենք եզրակացնում ենք, որ  $J1$  փոխանակման փոխազդեցությամբ սպինների զույգի համար հետազոտված քվանտային Ֆիշերի տելեկատվությունը հասնում է իր նվազագույնին, կրիտիկական մագնիսական դաշտին, որտեղ հիմքային վիճակի փուլային անցում է տեղի ունենում խիստ խճճված վիճակից բաժանելի վիճակից:

1D հակաֆերոմագնիսական սպին-1 Հայզենբերգի մոդելի համար, B արտաքին մագնիսական դաշտի ազդեցության և D մեկ իոնային անիզոտրոպիայի պայմաններում, հետազոտվել են հիմնական վիճակի խճճվածության հատկությունները: Վերջավոր շղթաներում, մոտակա և ոչ մոտակա հարևան հանգույցների համար ստացել ենք լոգարիթմական բացասականությունը: Ստացված փուլային դիագրամը քննարկվում է B - D հարթությունում, և որոշվում է մի գիծ, որտեղ էներգիայի խտությունը կախված չէ չափից և ավարտում է եռակի կետը: Վերջապես, ներկայացվում են վերջավոր շղթաների լոգարիթմական բացասականության արդյունքները վերջավոր ջերմաստիճանում որպես B և D-ից կախված ֆունկցիա:

Վերջավոր շղթայում, Ջյալոշինսկի-Մորիա փոխազդեցության, միախոն անիզոտրոպիայի և արտաքին մագնիսական դաշտի ազդեցության պայմաններում, 1D հակաֆերոմագնիսական սպին 1 և սպին  $3/2$  Հայզենբերգի XXX մոդելի համար որոշվել են խճճվածությունը, մագնիսականացումը և մագնիսական ընկալունակությունը:

Հաջորդիվ ուսումնասիրվել է հետևյալ խնդիրը՝ դրսի աշխարհից կա անընդհատ ինչ-որ գեոտիպով վիրուսների հոսք: Տվյալ միջավայրում այդ գեոտիպի ֆիտոնես մաքսիմալ չի, բայց շնորհիվ անընդհատ ներհոսքի՝ այն հաղթում է մրցման մեջ ավելի բարձր ֆիտոնես ունեցող վիրուսներին: Սա ոչ-պեռտոտոբատիվ ստատիստիկ ֆիզիկայի երևույթ է, անգամ ամենափոքր քանակությամբ հոսքը բերում է նոր էֆեկտի:

Ուսումնասիրվել է Մաքսվելի ձևան աչք պոտենցիալ էներգիայի պրոֆիլ ունեցող գրաֆենի քվանտային կետը: Պոտենցիալ էներգիայի կոորդինատների դանդաղ փոփոխվող ֆունկցիա լինելու հանգամանքը օգտագործվել է քվազիդասական մոտավորություն կառուցելու համար: Ցույց է տրվել, որ զրո էներգիայի մոտ էներգետիկ սպեկտրը մակրոսկոպիկ այլասերված է: Էլեկտրոնի բոլոր հետազոտերը փակ շրջանագծեր են, որոնք դասակարգվում են ըստ անկյունային մոմենտի և մի այլ լրացուցիչ շարժման ինտեգրալի: Դիրակի ստորին զոնայի լրիվ լցման դեպքում Հոլլի հաղորդականությունն ընդունում է ունիվերսալ արժեք:

Մենք ուսումնասիրել ենք լույսի կլանումը փոքր անհարթություններ ունեցող մակերևույթների կողմից, որոնց անհարթության ամպլիտուդը և կորրեկցիոն երկարությունը փոքր են մետաղի մակերևույթային խորացման երկարությունից: Զարգացվել է խոտորումների սիստեմատիկ մոտեցում այդպիսի համակարգերում լույսի կլանումը հաշվելու համար: Ցույց է տրվել, որ անհարթության հետ կապված փոփոխությունները պայմանավորված են խնդրում ներգրավված պարամետրերի՝ միմյանց միջև ունեցած համակցությամբ: Այս համակցությունը կարող է առաջացնել ավելի մեծ կլանում փոքր անհարթության դեպքում: Մենք ցույց ենք տվել, որ փոքր մասշտաբի դեպքում անհարթությամբ պայմանավորված կլանման


փոփոխությունները հիմնականում պայմանավորված են փոխազդեցության էֆֆեկտիվ ծավալով, որն առաջացնում է մետաղ ներթափանցող էլեկտրամագնիսական ալիքը:

Ուսումնասիրվել է պլազմայի ախտորոշման բևեռաչափական մեթոդ: Հաշվարկվել է պլազմայում զոնդի ազդանշանի բևեռացման հարթության պտտման անկյունը: Հայտնաբերվել է գազի մնացորդային միջին խտության և մագնիսական դաշտի միջին մեծության գնահատումները ցեզիումային պլազմայում՝ հիմնված Ֆարադեյի և Կոտտոն-Մուրֆոնի երևույթների ազդեցության վրա հետախուզական լազերային դաշտում: Ցույց է տրվել, որ բևեռացման հարթության պտտման անկյունը կախված է ընկնող լազերային ալիքի և միջավայրի անցումային հաճախության ռեզոնանսային հապալքսից, մագնիսական դաշտի լարվածությունից և մատրիցային էլեմենտից:

Հաշվարկվել է պլազմայում ինտենսիվ լազերային դաշտում զոնդի ազդանշանի բևեռացման հարթության պտտման անկյունը: Գտնվել են ցեզիումի պլազմայում մնացորդային գազի տեղական խտության գնահատականները՝ հիմնված Ֆարադեյի, Կոտտոն-Մուրֆոնի երևույթների ազդեցության և ինտենսիվ լազերային դաշտում զոնդի ազդանշանի ստիպողական պտտման վրա: Ներկայացված է զոնդի ազդանշանի բևեռացման հարթության ռեզոնանսային փոփոխության համառոտ տեսությունն ինտենսիվ իմպուլսի գործողության ներքո: Ցույց է տրվել, որ միջավայրում պտույտը բարդ կառուցվածք ունի:

Հաշվարկվել է մի քանի միաշերտ մաքսիմներից (միաշերտ՝ ՄՇ  $Ti_3C_2Tx$  մաքսինը բաղկացած է 5 ատոմական շերտերից) բաղկացած բազմաշերտ նմուշի դիէլեկտրիկ թափանցելիությունը: Հաշվարկը ցույց է տվել, որ երբ լույսի տարածման ուղղությունը զուգահեռ է նմուշի հարթությանը, մինչև 15 շերտ ունեցող նմուշների համար դիէլեկտրիկ թափանցելիության վարքը գրեթե չի տարբերվում միաշերտից, ինչը դիտվել է նաև փորձնականորեն: Մա ցույց է տալիս, որ շերտերի միջև փոխազդեցությունը թույլ է, և հետևաբար բարակ շերտերի համար ստացված տեսական արդյունքները կարելի է կիրառել կամայական բազմաշերտ նմուշների դեպքում: Ուսումնասիրվել է մակերևութով ուժեղացված ռամանյան ցրումը (ՄՌՌՑ), երբ տակդիրը բաղկացած է արծաթե փոխազդող նանոմասնիկներից: Ցույց է տրվել, որ երբ ընկնող ալիքի երկարությունը մոտ է ուսումնասիրվող մոլեկուլի կլանման մաքսիմումին, արծաթե նանոմասնիկների սայրերի մոտ ՄՌՌՑ-ի ուժեղացման գործակիցը կարող է հասնել ռեկորդային արժեքների՝ 1013 և ավելի:





Փորձարարական ֆիզիկայի բաժանմունք

Ղեկավար՝ Շ. Մարուքյան

Հաշվետու ժամանակահատվածում **Փորձարարական ֆիզիկայի բաժանմունքն** իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

**կատարված աշխատանքներ**

ԼՈՒԷ-75 էլեկտրոնային գծային արագացուցիչում կատարվել են տեխնիկական ռեգլամենտային պրոֆիլակտիկ աշխատանքներ և էլեկտրոնային փնջով գիտափորձեր:

Հաշվետու ժամանակահատվածում, գծային արագացուցիչում իրականացվել են հետևյալ տեխնիկական աշխատանքները.

- ✓ վակուումային համակարգի մասնակի պրոֆիլակտիկա՝ ֆորվակուումային (AB3-20Ճ) և տուրբոմոլեկուլյար (TMH-200) պոմպերի վերանորոգում և կարգավորում,
- ✓ յուրաքանչյուր սեանսից առաջ կատարվել են ռեգլամենտով պահանջվող պրոֆիլակտիկ աշխատանքներ,
- ✓ ստեղծվել է սինքրոտրոնի սրահում գտնվող զուգահեռ տեղափոխման փնջատարի ֆորվակուումի չափման հնարավորություն: Այժմ ինժեկտորի վահանակից հնարավոր է հսկել ֆորվակուումը փնջատարի նաև այդ հատվածում:

Շնորհիվ կատարված աշխատանքների 2022 թվականին բարեհաջող իրականացվել են գիտափորձեր ԼՈՒԷ-75-ի փնջերի կիրառմամբ: Փնջերի պարամետրերը՝ էներգիան և հոսանքը եղել են ըստ փորձերի պայմանների պահանջի. էներգիան՝ 20-70 ՄԷՎ, հոսանքը՝ 0.3-1.1 մկԱ, սեանսների տևողությունը՝ 1-3 ժամ:

Փորձերի ժամանակ փնջի պարամետրերի վերահսկումը հաստատեց գծային արագացուցիչ հուսալի աշխատանքը:

Սեանսները կատարվել են հետևյալ ամիսներին՝

Ամիսներ	Սպառող, փորձի պատասխանատուներ
Ապրիլ	ՓՖԲ՝ Լ. Պողոսյան, Ի. Քերոբյան
Մայիս	ԵՊՀ՝ Ա. Բալաբեկյան, Գ. Հովհանիսյան ՓՖԲ՝ Ի. Քերոբյան
Հունիս	ՓՖԲ՝ Լ. Պողոսյան
Հուլիս	ՓՖԲ՝ Ա. Մարգարյան ԵՊՀ՝ Ա. Բալաբեկյան, Գ. Հովհանիսյան
Նոյեմբեր	ՄՀՄԻ (Դուբնա, Ռուսաստան), Նովի Սադ համալսարան (Սերբիա)
Դեկտեմբեր	ՓՖԲ՝ Լ. Պողոսյան

29. 10– 05. 11. 2022 թ. կազմակերպվել է հանդիպում և համատեղ քննարկում ՄՀՄԻ-ի և Նովի Սադ Համալսարանի պատվիրակության հետ: Նպատակը՝ ծանոթանալն ԱԱԳԼ-ի սարքավորումների հետ և ուսումնասիրել համատեղ աշխատանքների հնարավորությունը: Հանդիպման կազմակերպիչներն էին՝ Շ. Թորոսյանը, Շ. Մարուքյանը, Ա. Հակոբյանը:

Իրականացվել է ԼՈՒԷ-75 գծային արագացուցչի 40 ՄԷՎ էլեկտրոնային փնջով համատեղ գիտափորձ: Փորձարարական ֆիզիկայի և Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժինների HPeG-ի դետեկտորների միջոցով կատարվել է ակտիվ թիրախների սպեկտրոմետրիկ անալիզ:

Մասնակիցների կողմից հանդիպումը և փորձի արդյունքները գնահատվել են դրական և խոստումնալից: Նաև քննարկվել է ապագա համատեղ աշխատանքների ծրագիր-գրաֆիկը: Աշխատանքները և գիտափորձերը շարունակական կլինեն:

ՄՀՄԻ-ի և Նովի Սադ Համալսարանի հետ կատարված համատեղ գիտափորձի արդյունքները կարտացոլվեն պատրաստվող հոդվածում, որը կտպագրվի Physics of Elementary Particles and Atomic Nuclei գիտական հանդեսում:

2022 թ. շարունակվել են գիտափորձերը ԼՈՒԷ-75 էլեկտրոնային գծային արագացուցչի արգելակային ֆոտոնային փնջերի օգտագործմամբ՝ կիրառելով ակտիվացիոն անալիզի մեթոդը: Ճառագայթված թիրախների ակտիվությունը չափվել է CANBERRA HPGe դետեկտորով, համալրված GENIE 2000 ծրագրով: Նախօրոք չափվել է CANBERRA HPGe դետեկտորի էֆեկտիվությունը դետեկտորի և աղբյուրի միջև տարբեր հեռավորությունների համար՝ 0 – 25 սմ տիրույթում:

Էլեկտրոնների 20 ՄԷՎ և 70 ՄԷՎ էներգիաների փնջերով ճառագայթվել են բնական նիոբիումի և տանտալի թիրախների փաթեթներ: Նիոբիումի  $^{92m}\text{Nb}$ ,  $^{90g}\text{Nb}$ , և  $^{89m}\text{Nb}$  իզոտոպների համար ստացվել են ֆոտոնների փնջով միջինացված կտրածքների վերաբերյալ տվյալներ, որոնք լրացնում են նախկինում չափված տվյալները 30 ՄԷՎ և 40 ՄԷՎ էներգիաների համար: Կատարվել են տեսական հաշվարկներ GEANT4 ծրագրային փաթեթով ֆոտոնների սպեկտրը ստանալու համար, նաև TALYS 1.95 և EMPIRE 3.2 միջուկային կոդերով միջին կտրվածքը որոշելու համար: Ստացված արդյունքները համեմատվել են առկա փորձարարական տվյալների հետ: Սխալների սահմաններում, փորձարարական տվյալները համընկնում են ինչպես տեսական, այնպես էլ այլ հեղինակների ստացած տվյալների հետ:

Առաջարկվել է նոր մեթոդ  $^{180m}\text{Ta}$  առաջացման կտրվածքի գնահատման համար՝ հիմնված GEANT4 ծրագրային փաթեթով կատարած հաշվարկի վրա: Գնահատվել է իզոմեր հարաբերությունը  $^{180m,g}\text{Ta}$  իզոմեր զույգի համար:

ԱԱԳԼ-ի գծային էլեկտրոնային արագացուցչի վրա  $E_e = 30$  ՄԷՎ միջին էներգիայի դեպքում առաջին անգամ շեմամերձ տիրույթում հետազոտվել է արգելակային ճառագայթման ֆոտոններով հարուցված  $^{209}\text{Bi}(\gamma, 4n)^{205}\text{Bi}$  ռեակցիան (շեմային էներգիան՝  $E_{\gamma}^{\text{th}} = 29.5$  ՄԷՎ): Չափվել է այդ պրոցեսի՝ ֆոտոնների սպեկտրով միջինացված կտրվածքը՝  $\langle\sigma\rangle = (1.95 \pm 0.22)$  մբ, ինչը մեկ կարգով գերազանցում է TALYS 1.9 մոդելի կանխատեսած արժեքը: Նման տարաձայնությունը կարող է պայմանավորված լինել այն բանով, որ մոդելում նախատեսված չէ կորելացված (ռեզոնանսային) նեյտրոնային համակարգերի առաջացման հնարավորությունը, ինչի վերաբերյալ վերջերս ստացվել են հավաստի տվյալներ՝ 2.4 ՄԷՎ ռեզոնանսային էներգիայի դեպքում (M. Duer et al., Nature 606 (2022) 678):

Շարունակվել է ԱԱԳԼ-ի էլեկտրոնային գծային արագացուցչի վրա 21.5, 28, 30, 35 և 55 ՄԷՎ սահմանային էներգիաներով արգելակային ֆոտոնների փնջերով ճառագայթված տարբեր թիրախների, ինչպես նաև Ամուլսարի մերձակայքից վերցված հողի նմուշների գամմա-սպեկտրաչափական վերլուծությունը:  $E_e = 28$  ՄԷՎ դեպքում ճառագայթված հողի նմուշի վերլուծության արդյունքում չափվել են  $(\gamma, n)$  տիպի ռեակցիաների էլքերը, որոնց հիման վրա գնահատվել են հետազոտվող իզոտոպների ( $^{238}\text{U}$ ,  $^{140}\text{Ce}$ ,  $^{133}\text{Cs}$ ,  $^{86}\text{Sr}$ ,  $^{75}\text{As}$ ,  $^{48}\text{Ca}$ ) և

համապատասխան տարրերի (U, Ce, Cs, Sr, As, Ca) տարածվածությունները: Վերջինները համեմատվել են առկա տարբեր չափումների արդյունքների հետ:

## 2. C18/18 ցիկլոտրոնի պրոտոնային փնջի վրա կատարված աշխատանքներ

Շարունակվել են ցիկլոտրոն C18/18-ի վրա գիտափորձերը՝ պրոտոն հարուցված ռեակցիաների գրգռման ֆունկցիաների չափման նպատակով՝ օգտագործելով փաթեթ-թիրախի ակտիվացման մեթոդը: Ճառագայթվել է բնական գադոլինիումը ( $^{nat}Gd$ )՝ բժշկության մեջ հետաքրքրություն ներկայացնող  $^{152}Tb$ ,  $^{155}Tb$ , և  $^{161}Tb$  իզոտոպների ստացումն ուսումնասիրելու համար:

Նախատեսվում է կատարել բնական անագի ( $^{nat}Sn$ ) վրա գրգռման ֆունկցիաների ուսումնասիրությունը C18/18-ի դուրս բերված պրոտոնային փնջի օգտագործմամբ: Միջուկային ռեակցիաների էլքում ստացված ծարիրի (Sb-stibium) որոշ ռադիոնուկլիդներ (օր՝  $^{122}Sb$ ,  $^{124}Sb$ ) ունեն այնպիսի տրոհման պարամետրեր, որոնց շնորհիվ դրանք կարելի է օգտագործել միջուկային բժշկության մեջ որպես ուղեկցող նյութեր: Քանի որ անագը հանդիսանում է համաձուլվածքների կարևոր բաղադրիչ, ապա դրա կոռոզիայի, էռոզիայի և մաշվածության վարքագծերը կարելի է ուսումնասիրել ծարիրի իզոտոպների հետազոտությամբ:

$^{nat}Sn(p,xn)$  ռեակցիաների համար կատարվել են կտրվածքների և իզոմեր հարաբերությունների տեսական հաշվարկներ TALYS 1.95 և EMPIRE 3.2 կոդերի տարբեր մոդելների միջոցով: Տպագրված աշխատանքների հետ համեմատության նպատակով՝ հաշվարկները կատարվել են բոլոր հնարավոր ռեակցիաների համապատասխան շեմից մինչև 70 ՄԷՎ տիրույթում: TALYS 1.95 և EMPIRE 3.2 կոդերի բոլոր մոդելները նկարագրում են փորձարարական տվյալները:

Պրոտոնի հինգ էներգիական տիրույթներում ( $\langle E_p \rangle = 12.7, 12.9, 14.1, 15.3, 16.4$  ՄԷՎ) չափվել է  $^{232}Th(p,n)^{232}Pa$  ռեակցիայի կտրվածքը: Չափման արդյունքներն ապահովում են տվյալների շտեմարանի որոշակի ճշգրտում՝ նկատի առնելով գոյություն ունեցող տվյալներում առկա տարաձայնությունները:

Ստացվել են տվյալներ ուրանի միջուկի՝ պրոտոններով հարուցված ճեղքման որոշ կանալների կտրվածքների վերաբերյալ, մասնավորապես  $^{238}U(p,X)^{132}Te$  ճեղքման ռեակցիայում  $^{132}Te$  ռադիոիզոտոպի առաջացման կումուլյատիվ կտրվածքի վերաբերյալ: Այն զգալիորեն լրացնում են տվյալների բացը  $E_p < 30$  ՄԷՎ էներգիական տիրույթում:

Պրոտոնի երեք էներգիական տիրույթներում ( $\langle E_p \rangle = 14.1, 15.3, 16.4$  ՄԷՎ) չափվել է  $^{232}Th(p,3n)^{230}Pa$  ռեակցիայի կտրվածքը: Չափման արդյունքներն ապահովում են տվյալների շտեմարանի որոշակի ճշգրտում:

Ստացվել են նոր տվյալներ  $^{197}Au(p,n)^{197m}Hg$  ռեակցիայի կտրվածքի վերաբերյալ՝ պրոտոնների  $E_p = 9.1, 9.6, 12.4, 13.7$  և  $16.9$  ՄԷՎ էներգիաների դեպքում: Արդյունքներն այստեղ ևս ապահովում են տվյալների շտեմարանի որոշակի ճշգրտում: Ստացվել են տվյալներ թորիումի միջուկի՝ պրոտոններով հարուցված ճեղքման որոշ կանալների կտրվածքների վերաբերյալ:

Արագացուցիչների վրա կատարված փորձերի արդյունքները տպագրվել են գիտական ամսագրերում՝ հրապարակումների ընդհանուր թիվը 6-ն է:

### 3. Հետազոտություններ CERN միջազգային կենտրոնում (LHC)

Շարունակվել են ԱՄԳԼ-ի երեք խմբերի պլանավորված աշխատանքները CERN-ի CMS, ATLAS և ALICE գիտափորձերում: Ի լրումն այդ աշխատանքների՝ ընդունվել են նոր պարտավորություններ և իրականացվել են հետևյալ նոր ծրագրերը.

1. Ավարտվել է վեկտոր-բոզոնային միաձուլման մեխանիզմով H-բոզոնի ծնման և b-քվարկային զույգի տրոհման պրոցեսի ուսումնասիրությունը (VBF H→bb)՝ օգտագործելով 13 ՏեՎ էներգիայով pp-բախումների 2016-2018 թթ. CMS (LHC) փորձարարական տվյալները: 2016-2018թթ. միասնական տվյալների համար VBF H→bb ազդանշանի ինտենսիվությունը հաշվարկվել է  $\mu = 0.97_{-0.45}^{+0.53}$  68% վստահելիության աստիճանով: Ազդանշանի չափված/սպասվող արտահայտվածությունը կազմում է 2.4/2.7 ստանդարտ շեղում՝  $\sigma_{\text{obs}} (\sigma_{\text{exp}}) = 2.4\sigma (2.7\sigma)$ :
2. Կատարվել են CMS հաղորնային կալորիմետրի տվյալների որակավորման համակարգի արդիականացման աշխատանքներ, ինչպես նաև հաղորնային կալորիմետրի պայմանների թարմացման և ներմուծման աշխատանքներ:
3. DESY (Համբուրգ, Գերմանիա) CMS խմբի հետ համատեղ իրականացվել է CMS գիտափորձի տվյալների բազայի արդիականացման աշխատանքները, որը ևս գրանցվել է որպես ԱՄԳԼ CMS խմբի պարտավորությունների կատարում:
4. FermiLab (ԱՄՆ) CMS խմբի հետ համատեղ սկսվել է Սուպերսիմետրիկ մոդելներով կանխատեսվող «Երկարակյաց մասնիկների» որոնման աշխատանքը CMS փորձարարական տվյալներում:
5. CMS գիտափորձի «Phase2-Upgrade» արդիականացման նախագծի շրջանակներում շարունակվել է CMS նոր կալորիմետրական համակարգի (High granularity calorimeter) կոսմիկական մյուոններով թեստավորման համար կառուցվող (ՄՀՄԻ, Դուբնա, ՌԴ) փորձարարական սարքավորման մոդելավորման աշխատանքները: Կատարվել է այս սարքավորման տրիգգերային համակարգի օպտիմալացումը:
6. Իրականացվել են CMS գիտափորձի «Run3» (2022-24թթ.) տվյալներում VBF Hbb պրոցեսի ուսումնասիրության համար «online»-տրիգգերներ մշակման և թեստավորման աշխատանքները:
7. Իրականացվել են CMS գիտափորձի «Run3» (2022-24թթ.) տվյալներում Հիգգս բոզոնային զույգի ծնման և b-քվարկային զույգերի տրոհման (HH→4b) պրոցեսի համար «online»-տրիգգերներ էֆֆեկտիվությունների հաշվարկը՝ օգտագործելով 13.6 ՏեՎ էներգիայով pp-բախումների 2022թ. տվյալները:
8. ATLAS գիտափորձի շրջանակներում մասնակցել ենք TileCal կալորիմետրի «Phase2-Upgrade»-ի հետ կապված նոյեմբերի 4 -13-ը տևած beam tests փորձի հերթափոխերին:
9. Այս տարի ԱՄԳԼ- ում պատրաստվել է ATLAS-ի TileCal-ում ցածր լարման աղբյուրների հեռակառավարումն ապահովող AUXboard3-ի համար 80 հատ Front Panel, որից մոտ 10 հատ արդեն առաքվել է CERN: Հաջորդ տարի նախատեսվում է CERN առաքել մնացած Front Panel-ները:
10. Աշխատանքներ ATLAS գիտափորձի տեխնիկական համակարգում: TDAQ համարգչային ադմինիստրացիա՝ Point 1-ի տարածքում համակարգչային ենթակառուցվածքների անխափան աշխատանքի ապահովում:
11. Մեխանիկական, տեխնիկական համագործակցություն: Նախապատրաստական

աշխատանքներ դետեկտորի տարեկան սպասարկման համար:

12. 2022թ. զարգացվել է 2021թ. մշակված և հրատարակված BWTP ֆենոմենոլոգիական մոդելը [Eur.Phys.J.A57\(2022\)](#), որը մեծ ճշտությամբ նկարագրում է LHC-ի pp և Pb-Pb բախումներում չափված զանազան հադրոնների (պիոնից մինչև չարմոնիում) լայնակի իմպուլսի (pT) սպեկտրները և դրանց կախվածությունը բախումների կենտրոնականությունից կամ ծնված լիցքավորված մասնիկների բազմակիությունից: Հրապարակումների թիվը գիտական ամսագրերում ընդհանուր 91-ն է:

#### 4. Հետազոտություններ JLab-ի A, B, C և D փորձարարական սրահներում

2022 թ. A սրահում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցություն SBS-ի (Super BigBite-Spectrometer) նախագծմանը վերաբերվող առցանց քննարկումներին,
2. Մասնակցություն SBS-ի կառուցման աշխատանքներին, A սրահում հայկական խմբի հետագա գործունեության պլանավորում,
3. Մասնակցություն E12-09-019 GMn (Precision Measurement of the Neutron Magnetic Form Factor) գիտափորձին (2021թ. սեպտեմբեր – 2022 թ. փետրվար),
4. E12-17-004 (GEn-Recoil) գիտափորձի համար նախատեսված սարքավորման պատրաստում: Սարքավորումը (compass) նախատեսված է թիրախի բնեռացման ուղղության որոշման համար,
5. Մասնակցություն կապարային ապակիների թափանցելիության վերականգնման եղանակի մշակմանը: Ընտրված մեթոդի կիրառմամբ վերականգնման աշխատանքներ,
6. Ընթանում են SBS/GEp5 (Large Acceptance Proton Form Factor Ratio Measurements at 13 and 15 (GeV/c)<sup>2</sup> using Recoil Polarization Method) գիտափորձի համար նախատեսված էլեկտրամագնիսական կալորիմետրի վերջնական նախագծման և կառուցման աշխատանքները:

B սրահում շարունակվել են RGA և RGB փորձերի տվյալների վերլուծության աշխատանքները E12-12- 001, E12-12-001A, E12-11-103B, E12-07-104A նախագծերի շրջանակներում.

1. E12-12-001 և E12-12-001A գիտափորձերի շրջանակում ուսումնասիրվել է CLAS12 դետեկտորի վրա J/ψ մեզոնի շեմին մոտ ֆոտոծնման պրոցեսը: Սկսվել են վերլուծությունների երկրորդ փուլի աշխատանքները, իրականացվել է ուսումնասիրվող երևույթների մոդելավորում Մոնտե-Կարլո մեթոդով, որտեղ կիրառվել են CLAS12-ում ընդունված ծրագրային փաթեթները՝ JpsiGen դեպքերի գեներատորը (գեներացնում է J/ψ-ի էքսկլյուզիվ ֆոտոծնում, e-e+ տրոհման կանալով) և GEMC-ն (GEant4 Monte-Carlo), որը GEANT4 փաթեթի հարմարեցված տարբերակն է, համապատասխանեցված CLAS12 սարքավորման կառուցվածքին RGA փորձի համար:
2. Շարունակվել են E12-07-104A փորձի տվյալների ուսումնասիրությունները դեյտրոնի թիրախից վեկտոր մեզոնների կոհերենտ ֆոտոծնման պրոցեսի համար: Կատարվել է համակարգչային մոդելավորման վերլուծություն, քայլեր մասնիկների նույնականացման և կատարված հաշվարկների բարելավման ուղղությամբ:
3. Մասնակցություն CVT և BMT դետեկտորների հետ տարվող սպասարկման աշխատանքներին: CVT գրանցիչի համար հետագծերի վերականգնման և գրանցման արդյունավետության նպատակով Արհեստական Բանականության միջոցով

ծրագրային փաթեթի մշակում, որը նախատեսվում է գրանցված մասնիկների կինեմատիկ պարամետրերի գնահատման համար:

4. Մասնակցություն տեղում RCG գիտափորձի հերթափոխերին:

2022թ. Ջեֆերսոնի Լաբորատորիայի C սրահում շարունակվել է 12 ԳԷՎ էներգիայի էլեկտրոնային փնջով ֆիզիկական գիտափորձերի ծրագիրը, այդ թվում՝

1. Մասնակցություն մեծ Q2-ների տիրույթում պիոնների էքսկյուզիվ էլեկտրաձեռնման կտրվածքի L-T բաժանման և Fπ ֆորմ-ֆակտորի որոշման E12-19-006 գիտափորձին: Այս չափումները առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հաղորդապարտոնային ռեժիմից քվարկ-գլյուոնային ռեժիմին անցնելու տիրույթում հաղորդային կառուցվածքի ըմբռնման համար:
2. Մասնակցություն EMC և X>1 E12-10-008 և E12-06-105 գիտափորձերին: Նոր չափումները կրթացնեն EMC էֆեկտի JLab-ում ստացված նախկին տվյալները x-ի ավելի լայն կինեմատիկ տիրույթում և կլինեն առաջին ճշգրիտ տվյալները թեթև միջուկների (A<12) համար,
3. Կատարվել են չեզոք մասնիկների սպեկտրոմետրի նախագծի հետ կապված աշխատանքներ: Շարունակվել են կապարի վոլֆրամատի բյուրեղների (PbWO<sub>4</sub>) ձեռքբերումը CRYTUR (Չեխիա) ընկերությունից, նրանց չափագրումը և օպտիկական բնութագրերի ստուգումը: Սպեկտրոմետրը ներկայումս գտնվում է կառուցման ավարտական փուլում:
4. Կատարվել են ժամանականման Կոմպտոնյան ցրման (TCS) նախագծի հետ կապված աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԱՍԳԼ-Jlab GlueX կոլաբորացիայի անդամները մասնակցել են՝

1. D փորձարարական սրահում կատարվող GlueX գիտափորձի աշխատանքներին,
2. 20 հեռավար հերթափոխերի:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 21-ն է:

## 5. Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրում (HESS և CTA)

ԱՍԳԼ ՓՃԲ-ի Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրման (HESS և CTA) խումբը 2022թ. ընթացքում շարունակել է հետազոտությունները շատ բարձր էներգիաների (ՇԲԷ, մի քանի տասնյակ ԳԷՎ-ից մինչև մի քանի հարյուր ՏԷՎ տիրույթ) գամմա-ճառագայթների աստղաֆիզիկայի բնագավառում: Խումբը կատարել է հետևյալ աշխատանքները.

Շարունակել է մասնակցել H.E.S.S. (High Energy Stereoscopic System) համագործակցության գիտական ծրագրի իրականացմանը:

Հետազոտել է մինչև 100 ԳԷՎ էներգետիկ տիրույթում Պատկերային Մթնոլորտային Չերենկովյան Դիտակների (ՊՄՉԴ) կողմից գրանցվող փորձարարական տվյալների մաթեմատիկական վերլուծության նոր՝ ավելի արդյունավետ եղանակներ կամ չերենկովյան պատկերը նկարագրող նոր պարամետրեր մշակելու հնարավորությունները:

Ստեղծել է մի քանի ԳԷՎ-ից բարձր էներգիա ունեցող գամմա-քվանտների և տիեզերական ճառագայթների մաս կազմող պրոտոնների ու էլեկտրոնների Մոնտե-Կարլո

բանկ՝ CTA (Cherenkov Telescope Array) համագործակցության LST1 (Large-Size Telescope) դիտակի համար, որի օգնությամբ ուսումնասիրվել են մինչև 100 ԳԷՎ էներգիա ունեցող գամմա հեղեղների առանձնացման արդյունավետության բարձրացման նոր մեթոդներ: Պրոտոնների դեպքում ցույց է տրվել, որ, եթե միայն Alpha պարամետրով կարելի է հասնել ազդանշանի առանձնացման արդյունավետության բարելավման 1.2-1.6 գործակից (Size=40-100pe), ապա երեք պարամետրի օգտագործման և Dist պարամետրի որոշակի արժեքների դեպքում այն դառնում է 1.8-2.4՝ Size-ի նույն արժեքների համար:

Հրապարակումների ընդհանուր թիվը գիտական ամսագրերում 6-ն է:

## 6. Մասնակցություն EIC համագործակցության աշխատանքներին

Էլեկտրոն-իոնային կոլայդերը (EIC-ը) նախատեսվում է կառուցել Բրուքհեյվենի ազգային լաբորատորիայում: Այն կունենա փնջերի ընդհարման 100-1000 անգամ ավելի մեծ հաճախականություն մինչ այդ եղած էլեկտրոն-իոնային կոլայդերների համեմատ:

Ներկայումս ԱՄԳԼ-ի խումբը նախապատրաստում է անհրաժեշտ նյութա-տեխնիկական բազան՝ EIC-ի աշխատանքներում լիարժեք ընդգրկվելու համար: ԱՄԳԼ-ում տնօրինության և ամերիկյան բարերարների օգնությամբ կառուցվել է լաբորատոր սենյակ՝ հատուկ մեթոդիկ աշխատանքներ իրականացնելու համար: Բարերարների օգնության, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ Գիտության Կոմիտեի կողմից թեմատիկ մրցույթի և ենթակառուցվածքների զարգացման համար հատկացված դրամական միջոցներով այն համալրվել է միջազգային ստանդարտներին համապատասխանող էլեկտրոնիկայով և հատուկ չափիչ սարքերով: Կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Կալորիմետրի նախատիպի ուսումնասիրություններ: EIC-ի կալորիմետրի նախագծումը վերջնական տեսքի բերելու նպատակով համագործակցությունը կառուցել է մի քանի նախատիպեր՝  $PbWO_4$  բյուրեղների տարբեր կոնֆիգուրացիաներով ( $3 \times 3$ ;  $5 \times 5$  և  $12 \times 12$ ,  $PbWO_4$  բյուրեղի չափսերն են՝  $2 \times 2 \times 20$  սմ<sup>3</sup>), որոնց բնութագրերի ուսումնասիրություններին մասնակցում է ԱՄԳԼ-ի խումբը:
2. Կատարվել են նախատիպի փորձարկումներ DESY կենտրոնում (Համբուրգ, Գերմանիա):
3. Կատարվել են սիմուլյացիայի հաշվարկներ՝ GEANT4 ծրագրի հիման վրա, EIC դետեկտորի էլեկտրամագնիսական EEMCAL և barrel EMCal կալորիմետրների էներգետիկ և կոորդինատային լուծողունակության կախումը երկրաչափական դասավորությունից, նյութի քանակից և այլ պարամետրերից ուսումնասիրելու նպատակով:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 3-ն է:

## 7. Ռեալ և վիրտուալ ֆոտոններով միջուկների ձեռքման և ֆրագմենտացիայի ուսումնասիրություններ

Իրականացվել են ուսումնասիրություններ ՀՀ ԿԳՄՍ Գիտության Կոմիտեի կողմից ֆինանսավորված «Պիկովայրկյանային լուծողականությամբ երկրորդական էլեկտրոնների դետեկտոր  $\Lambda$  հիպերմիջուկների հետազոտությունների համար» և ՄԳՏԿ-ի "RF timer of keV electrons" ծրագրերի շրջանակներում:

Շարունակվել են ՌՀ թայմերի նախատիպի տեսական և փորձարարական ուսումնասիրությունները: Ամփոփվել են սինխրոնիզացված լազերի վրա ստացված



արդյունքները: Ցույց է տրվել, որ համակարգի ժամանակային լուծողունակությունը կազմում է մոտ 10 պվ, իսկ կայունությունը՝ 0.5պվ/ժամ:

Հաջողվել է ստանալ ֆոտոէլեկտրոնների սպիրալաձև սքանավորման պատկեր՝ կիրառելով երկու իրար մոտ ՌՀ հաճախականություններ: Այս մեթոդի կիրառումը թույլ կտա էապես մեծացնել սարքավորման դինամիկ տիրույթը՝ 2նվ-ից մինչև տասնյակ նանովայրկյաններ:

Շարունակվել են ուսումնասիրությունները բարձր (1-10 ԳՀց) ՌՀ հաճախականությունների տիրույթում, ինչը թույլ կտա էապես (անգամներ) լավացնել սարքի լուծողունակությունը ստանդարտ 500 ՄՀց-ի հետ համեմատ: Կատարվել են ֆոկուսացման ուսպնյակի և ընդհանուր համակարգի օպտիմիզացմանն ուղղված Մոնտե Կարլո հաշվարկներ: Կառուցման վերջին փուլում է  $\Delta$  հիպերմիջուկների և նանոկառուցվածքների ուսումնասիրությունների համար նախատեսված նոր դետեկտորը:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 2-ն է:


## 8. Հետազոտություններ նյութագիտության ոլորտում

ա) Խիտոզանի նոր ածանցյալների սինթեզ և ուսումնասիրություն

1. 2022 թ. շարունակվել է խիտոզանի ԽԶ-(ԽԶ-CS) հիման վրա նոր Շիֆֆի հիմքերի (ԽՇՀ-CSSB) սինթեզ և սինթեզված համակարգերի ուսումնասիրությունները: Սինթեզված արգասիքները բնութագրվել են մոլեկուլյար սպեկտրոսկոպիայի՝ տեսանելի լույսի ինֆրակարմիր տիրույթում (FTIR-ATR),
2. Ուսումնասիրվել են ԽՇՀ-CSSB-երի հակամիկրոբային՝ “*P. Aeruginosa*” և “*S. Aureus*” հատկությունները:
3. Գիտահետազոտական աշխատանքներն իրականացվել են համագործակցելով Իտալիայի Ֆերրարայի համալսարանի աշխատակիցների հետ, որն ամրագրված է հետևյալ “Համաձայնագրով” RESEARCH COLLABORATION AGREEMENT “PROJECT TITLE- Synthesis of new chitosan and chitosan-based Schiff base compounds and definition of their anti-microbial activity”:

բ) Նանոկառուցվածքների և նանոնյութերի ուսումնասիրություններ

1. 2022թ. խմբի իրականացրած հետազոտություններն հիմնականում առնչվում են գրաֆենային թաղանթների, պերովսկիտային նյութերի, տիտանի երկօքսիդի այլ նյութերի սինթեզին և հեթազոտություններին: Ի թիվս այլի, կախված լուծույթի նյութաբաղադրիչային կազմությունից, հեղուկ փուլային շերտազատման մեթոդով ստացվել են երկու տիպի գրաֆենային շերտեր՝ լեգիրացված և չլեգիրացված: Ստացված նմուշները տեղափոխվել են տարբեր կրող հարթակների վրա և հետազոտվել: Լեգիրացված գրաֆենի հիմքով ստացվել են տաք մարմինների ինֆրակարմիր ճառագայթումը կառավարող թաղանթներ: Կատարվել են հետազոտություններ ATR (Attenuated Total Reflection) թուլացված ներքին անդրադարձման մեթոդով:
2. Կատարվել են գրաֆենային թաղանթների հետազոտություններ Horiba Xplora plus ռամանյան մանրադիտակային սպեկտրոմետրի միջոցով:



## Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին

*Ղեկավար՝ Վ. Հարությունյան*

Հաշվետու ժամանակահատվածում **Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին** իրականացրել է հետևյալ հետազոտությունները.

### **1. 15.5 ՄԷՎ էներգիայով պրոտոնային և 3.5 ՄԷՎ**

#### **էներգիայով էլեկտրոնային փունջերով հարուցված երևույթների ուսումնասիրությունը սիլիցիումի բյուրեղներում**

2022թ. ընթացքում կատարվել է n- և p-տիպի սիլիցիումի միաբյուրեղների պարամետրերի ուսումնասիրությունը 15.5 ՄԷՎ էներգիայով պրոտոններով ճառագայթահարման ազդեցությամբ, տարբեր չափաբաժինների դեպքում: Գտնվել է, որ n- և p-տիպի սիլիցիումի միաբյուրեղներում 15.5 ՄԷՎ էներգիայով պրոտոններով և 3.5 ՄԷՎ էներգիայով էլեկտրոններով ճառագայթահարման դեպքում արատների գոյացման պրոցեսը կախված չափաբաժնից նկարագրվում է էքսպոնենտային ֆունկցիայի տեսքով: Ինչպես նաև, ուսումնասիրվել են n- և p-տիպի սիլիցիումի միաբյուրեղներում լիցքակիրների կոնցենտրացիայի, շարժունակության և դիմադրության վարքը պրոտոն-էլեկտրոնային հաջորդական ճառագայթահարման ազդեցությամբ և չափվել են անհավասարակշիռ լիցքակիրների կյանքի տևողությունները: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ տարբեր չափաբաժիններով պրոտոնային ճառագայթահարումից հետո հաջորդական էլեկտրոնային ճառագայթահարումը մինչև նույնիսկ  $6 \cdot 10^{13}$  էլ/սմ<sup>2</sup> չափաբաժնի դեպքում էական փոփոխություններ չի առաջացնում սիլիցիումի միաբյուրեղների պարամետրերում, որը կարող է հետաքրքիր գիտական և գործնական կիրառություններ կարող է ունենալ:

2022թ-ի ընթացքում մշակվել և պատրաստվել է արեգակի ճառագայթման սպեկտրը նմանակող լուսային աղբյուր, բարձր էներգիաների պրոտոններով և էլեկտրոններով, տարբեր չափաբաժիններով ճառագայթված արևային մարտկոցների պարամետրերի վարքի ուսումնասիրության նպատակով:

Իրականացվել են InAs-ում ազատ էլեկտրոնների կոնցենտրացիայի աճի հետազոտություններ բարձր ջերմաստիճանային տաքացումից և հետագա իզոթերմ թրծումից հետո ստացված փորձարարական տվյալներից: Արագ մասնիկներով ճառագայթումից հետո՝ առաջին անգամ տեսական հաշվարկների ճանապարհով այն կապվում է բյուրեղում անվերահսկելի խառնուրդների տեսքով ոչ մեծ կոմպլեքսների առկայության հետ: Ցույց է տրվում, որ InAs-ի բյուրեղներում այդ կոմպլեքսները քայքայվում են բարձր ջերմաստիճանային թրծման ժամանակ՝ ստեղծելով լրացուցիչ ազատ էլեկտրոններ, որոնց հաշվարկների համար ընտրվել է կոմպլեքսի մոդել  $Cu+O^-$  և  $Cu+S^-$  տիպի մոտակա իոնական գույգերի տեսքով: Պարզվել է, որ 450°C, 650°C և 850°C ջերմաստիճանների համար իրականացված ազատ էլեկտրոնների հաշվարկային և փորձարարական արժեքները համընկնում են բավարար ճշգրտությամբ: Առաջարկվող մոդելը նախատեսվում է հետագայում կիրառել՝ InP և Si բյուրեղների վրա ստացված նմանատիպ արդյունքները մոդելավորելու և մեկնաբանելու համար:

**2. Հիդրոթերմալ միկրոալիքային մեթոդով սինթեզված սիլիկատային նյութերի ֆիզիկաօպտիկական հատկությունների կոմպլեքս ուսումնասիրում**

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է հիդրոթերմալ միկրոալիքային սինթեզի մեթոդով ստացված սիլիկատային միացությունների ճառագայթահարային կայունության ուսումնասիրությունները: Իրականացվել է ցինկի օրթոսիլիկատի և ցերիումով լեգիրացված ցինկի օրթոսիլիկատի նմուշների ճառագայթում 18 ՄԷՎ էներգիայի պրոտոններով Ռադիոիզոտոպների Արտադրության Կենտրոնում գործող C-18 ցիկլոտրոնի օգնությամբ (հոսանքը 0.6 մկԱ): ճառագայթման դոզայից կախվածությունը հասկանալու համար նմուշները ճառագայթվել են 3 տարբեր դոզաներով՝  $10^{13}$  պր/սմ<sup>2</sup>,  $10^{14}$  պր/սմ<sup>2</sup> և  $10^{15}$  պր/սմ<sup>2</sup>: Դոզան հաշվարկված է հաշվի առնելով 10-15 տարվա տիեզերական ճառագայթումը: Ճառագայթահարված միացությունների կառուցվածքը և ֆազային կազմը որոշվել է ռենտգենյան դիֆրակցիայի վերլուծությամբ (XRD), ուսումնասիրվել են նաև պրոտոններով ճառագայթահարված՝ մաքուր և ցերիումով լեգիրացված նմուշների դիֆուզ անդրադարձման գործակցի կախվածությունը ճառագայթման տարբեր դոզաներից, ճառագայթված փոշիներից մամլիչի օգնությամբ պատրաստվել են հաբանման նմուշներ, ինչպես նաև ուսումնասիրվել են սիլիկատների լյումինեսցենցիոն հատկությունները:

**3. Պերովսկիտային նյութերի սինթեզ և օպտիկական հատկությունների ուսումնասիրում**

Ընթացիկ տարում իրականացվել է արևային պանելների համար նախատեսված պերովսկիտային նյութերի սինթեզ և հատկությունների ուսումնասիրում: Մասնավորապես սինթեզվել են CsPbI<sub>3</sub> – CsPbBr<sub>3</sub> շարքի նմուշներ մոլորակային գնդաղացի և փոշենստեցման եղանակներով: Ուսումնասիրվել է ստացված նմուշների ճառագայթման հանդեպ դիմացկունությունը պրոտոնային փնջի տարբեր չափաբաժինների ազդեցության տակ:

Բարելավվել է վակուումային փոշենստեցման BYII-3 սարքավորումը, մասնավորապես իրականացվել են վակուումային համակարգի բարելավման աշխատանքներ: Արդյունքում վակուումի մակարդակը բարձրացվել է մոտ 2 կարգով, ինչը թույլ կտա էականորեն բարձրացնել ստացվող նմուշների որակը:

Հավաքվել է նմուշների այրման համակարգ, ինչը թույլ կտա ստացված նմուշներում ուսումնասիրել փուլային անցումները: Վառարանային համակարգը ունի ջերմաստիճանի կարգավորման հնարավորություն:

**4. Փնջի պրոֆիլի չափման նպատակով հիմնավորված, նախագծված և արտադրված նոր տեսակի լարային մոնիտորներ**

Շարունակվել են Ցիկլոտրոն 18 պրոտոնային փնջի երկչափանի պրոֆիլի չափման կայանի վերամշակումը: Մշակվել է նոր կոնստրուկտորական լուծում, որի արդյունքում հորիզոնական և ուղղահայաց չափումները կատարվում են միևնույն հարթության մեջ: Ընդլայնվել է մոնիտորների ապերտուրները, 15 մմ - ից մինչև 30 մմ, լարի երկարությունը ընդունվել է 72 մմ: Մշակվել է տատանումների գրգռման մագնիսական նոր համակարգ, որի արդյունքում մագնիսները հեռացվել են փնջի ազդեցության գոտուց: Մշակվել է էլեկտրոնիկայի նոր համակարգ, որը թույլ է տալիս կայանը տարանջատել կառավարման սենյակից մինչև 300 մ հեռավորությունով:

Մշակվել, պատրաստվել և փորձակվել է AREAL արագացուցչի SASE100 օնդուլյատորի վակուումային խցիկից փնջերի կորուստների դիագնոստիկ համակարգ, PIN-ֆոտոդիոդների հիման վրա: Համակարգի դետեկտորները տեղակայվել են վակուումային խցիկից դուրս և

որոշում են փնջի կորստի շրջանի գտնվելու վայրը: Էլեկտրոնների նյութի հետ փոխազդեցության պրոցեսները հաշվարկվել են PCLab ծրագրով, Հիմնական հաշվարկները նորմալացվում են մեկ մուտքային էլեկտրոնի վրա, մուտքի անկյան մի քանի արժեքների համար՝ 0°, 15°, 30°, 45°, 60°, 75° (անկյունները հաշվվում են նորմալից մինչև արգելքի մակերեսը): Նախնական (փորձնական) չափումներ են կատարվել մեկ PIN-ֆոտոդիոդով և երեք PIN-ֆոտոդիոդներից բաղկացած համակարգով AREAL արագացուցիչի էլեկտրոնային փնջի վրա: Գնահատվել է BPV34 ֆոտոդիոդների զգայունությունը էլեկտրոնային փնջի նկատմամբ, և եզրակացվել է, որ այդպիսի ֆոտոդիոդներից մեկն ի վիճակի է հայտնաբերելու էլեկտրոնային հոսանքները ֆԱ միջակայքում: Մշակվել և պատրաստվել է առաջին կասկադային նախաուժեղացուցիչը, որը հնարավորություն է տալիս գրանցել կարճ իմպուլսներ (էլեկտրոնների փնջերի տևողությունը պիկովայրկյանների միջակայքում է): Էլեկտրոնային պլատաները փորձարկվել են լուսադիոդների արձակած իմպուլսների մոդելում: Մշակվել և պատրաստվել է լույսի կարճ իմպուլսների ընդունման հատուկ համակարգ (իմպուլսի տևողությունը  $\approx 40$  նվ):

## **5. Ռադիոկենսաբանական հետազոտություններ ԱՐԵԱԼ արագացուցիչի էլեկտրոնային փնջի վրա:**

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են մանրէների վրա գերկարճ էլեկտրոնային փնջերի (CANDLE, AREAL) ազդեցության հետազոտությունները: Նախկինում ցույց էր տրվել, որ E.coli բակտերիաների գերկարճ էլեկտրոնային փնջերով ճառագայթման դեպքում գոյատևման կորերը ունեն անսովոր գոգավոր տեսք: Ստացված տվյալների հիման վրա նախնական ենթադրություն էր արվել, որ դա պայմանավորված է ճառագայթահարման միջավայրում թթվածնի առկայության հետ: Այդ ենթադրությունը ստուգելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում հետազոտվել է այդ մանրէների ճառագայթահարումը թթվածնի բացակայության պայմաններում:

Իրականացվող աշխատանքների երկրորդ ուղղությունը նվիրված է գերկարճ փնջերով մուտագենեզի հարուցման հնարավորության հետազոտմանը՝ մանրէների որոշակի բարձր նպատակային ակտիվություն ունեցող մուտանտներ ստանալու նպատակով: Փորձերում ներգրավվել են «Աքտարա» պեստիցիդի (ինսեկտիցիդ) նկատմամբ տոլերանտ մի քանի բակտերիալ շտամներ: Տեսթավորվող բակտերիաները պատկանում են Pseudomonas ցեղի չնույնացված շտամների շարքին, որոնք նախնական փորձերում ցուցադրել են թիամետոքսամ պարունակող միջավայրում թույլ աճի ունակություն: Տարբեր պայմաններում ԱՐԵԱԼ արագացուցչով այդ շտամների կախույթները ճառագայթահարելուց հետո դրանք ցանվել են վերը նշված էլեկտիվ միջավայրի վրա: Նշենք, որ ազարի մակերեսին աճած յուրաքանչյուր գաղութ աճել է մեկ առանձին բջջից: Ճառագայթահարման հետևանքով հարուցվել են տարբեր մուտացիաներ, այդ թվում նաև այնպիսիք, որոնց հետևանքով զգալի մեծացել է այդ մանրէների թիամետոքսամ ուտիլիզացնելու կարողությունը:

Ընթացիկ համագործակցություններ

1. Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ, Դուբնա
2. Նոտր Դամ-ի համալսարան, ԱՄՆ
3. Չունգամի Ազգային Համալսարան, Հարավային Կորեա
4. Երևանի Պետական Համալսարանի, Ֆիզիկայի ֆակուլտետ
5. CANDLE Մինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ
6. Ուսլանի Գիտության և Տեխնոլոգիաների Ազգային Ինստիտուտ, Հարավային Կորեա

7. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան ՏՀՏԷ ինստիտուտ
8. Ինժիներական քաղաք, մեխանիկական բաղադրիչների արտադրություն,
9. HTM-Reetz GmbH, Գերմանիա



## Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոն

Ղեկավար՝ Վ. Գուրզադյան

Հաշվետու Ժամանակահատվածում

Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոնը ծավալել է գիտահետազոտական գործունեություն հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. Գեոդեզիական հոսքերի հիպերբոլականություն, գրավիտացիոն ալիքներ;
2. Տիեզերքի ցածր խտության տիրույթներ /voids/, կոսմոլոգիական անոմալիաներ /tensions/, մոդիֆիկացված գրավիտացիա;
3. Գալակտիկական մութ հալոների բնութագրեր;
4. Մեքենայական ուսուցման ալգորիթմներ աստղաֆիզիկական տվյալների վերլուծությունում;
5. Գերնորեր, գալակտիկաների ձևաբանական և դինամիկական հատկություններ:

Արդյունքները հրատարակվել են բարձր վարկանիշով (IF) միջազգային ամսագրերում: Առանձնացնենք առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքները /highlights/՝

1. Առաջարկված է տիեզերքում ցածր խտության տիրույթների /voids/ կազմավորման նոր մեխանիզմ՝ կոսմոլոգիական հաստատունի առկայությամբ (Gurzadyan et al Astron. & Astrophys., 2022);
2. Ցույց է տրված, որ գրավիտացիոն ալիքները կարող են կատարել ալիքատարի դեր ֆոտոնների համար (Kocharyan, Samsonyan, Gurzadyan, Eur Phys J Plus, 2022);
3. Արտածված է կորեյացիա Գերնորերի բնութագրերի, գալակտիկաների պարուրաթների նկատմամբ դրանց դիրքի և տարիքի միջև (Karapetyan, Mon.Not.Roy.Astr.Soc, 2022):

Ակտիվ ընթացքի մեջ են միջազգային համագործակցությունները՝ Հռոմ, Յյուրիխ, Օքսֆորդ, Փարիզ, Մելբուռն, Մոսկվա և այլն:

LARES արբանյակային ծրագրի շրջանակներում 2022թ. հունիսի 13-ին տիեզերք արձակվեց LARES-2 արբանյակը՝ հարաբերականության ընդհանուր տեսության՝ Լենզե-Թիրինգի երևույթի ստուգման համար: Այդ արբանյակը առաջարկված էր 2017-ին.

I.Ciufolini, R. Matzner, V. Gurzadyan, R. Penrose // A new laser-ranged satellite for general relativity and space geodesy. III. De Sitter effect and the LARES 2 space experiment / European Physical Journal C, 2017, 77, 819.

Գուրզադյանը, որպես ծրագրի ղեկավար խորհրդի անդամ, ներկա էր արձակմանը Կուրուից (Kourou, European Space Agency spaceport, French Guiana).



2022թ., 13 հունիսի, Կուրու, Եվրոպական տիեզերական գործակալության արբանյակների կառավարման կենտրոնում (ձախից), Ռ.Մացներ (ԱՄՆ), Վ.Գուրգադյան, Ի.Չուֆոլինի (Իտալիա), Ա.Պաուլոցի (Իտալիա):





## Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժին

*Ղեկավար՝ Ա. Չիլինգարյան*

Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի **Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժնի** Արագած և Նոր Ամբերդ բարձր լեռնային գիտահետազոտական կայաններն իրենց՝

մասնիկների հոսքերի, էլեկտրական դաշտերի, շրջակա միջավայրի պարամետրերի, կայծակի տեղակայման և մթնոլորտային պարպումների մշտադիտարկման եզակի սարքավորումներով հնարավորություն են տալիս առաջադեմ բազմասենսորային հետազոտություններ իրականացնել Աստղային մասնիկների ֆիզիկայի հետևյալ ոլորտներում.

- ✓ Տիեզերական ճառագայթների առաջացման և արագացման մեխանիզմներ;
- ✓ Արեգակ-երկիր կապեր; Գալակտիկական տիեզերական ճառագայթների արեգակնային մոդուլյացիա,
- ✓ Տիեզերական եղանակ,
- ✓ Արեգակի վրա մասնիկների արագացուցիչների աշխատանքը,
- ✓ Բարձր էներգիայի ֆիզիկա մթնոլորտում (HEPA),
- ✓ Ամպրոպային Վերգետնյա Ավելացումներ (TGEs),
- ✓ Ճառագայթային միջավայրի մշտադիտարկում,
- ✓ Մթնոլորտային էլեկտրական դաշտի ուղղահայաց և հորիզոնական պրոֆիլների հետազոտություն,
- ✓ Մթնոլորտային էլեկտրական դաշտի ազդեցությունը Չերենկովյան մթնոլորտային աստղադիտակների և մթնոլորտային լայն հեղեղներ գրանցող մասնիկների դետեկտորների աշխատանքի վրա,
- ✓ Կայծակների ֆիզիկա,
- ✓ Երկրաֆիզիկական պարամետրերի մշտադիտարկում և տվյալների գրանցում՝ գլոբալ փոփոխությունների հետազոտության համար;
- ✓ Գիտական սարքավորումներ,
- ✓ Տվյալների բազմաչափ վերլուծություն:

Բարձր էներգիայի ֆիզիկական մթնոլորտում HEPA-ի նոր ձևավորվող ոլորտը (վերջին տասնամյակի ընթացքում մեծ ջանքերով) ներառում է տարբեր ֆիզիկական պրոցեսներ, որոնք տարածվում են մինչև մի քանի խորանարդ կիլոմետր ամպրոպային ամպերի մեջ և հարյուրավոր խորանարդ կիլոմետրեր տարածության մեջ: Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժանմունքի գիտնականները հայտնաբերել են ամպրոպների ժամանակ առաջացած մասնիկների կարճ բռնկումները և երկար տևացող մասնիկների հոսքերի բազմապատկման ու արագացման մեխանիզմներն ու բնութագրերը և առաջին անգամ չափել են Երկրի մակերևույթ հասնող մթնոլորտային ծագման մասնիկների հեղեղներից էլեկտրոնների և գամմա ճառագայթների էներգիայի սպեկտրները: Նաև, առաջին անգամ մենք ենք նկատել մթնոլորտում էլեկտրոնների և գամմա ճառագայթների հեղեղների ստեղծման ժամանակ արձակվող կապույտ-ուլտրամանուշակագույն լույսերը, որոնք լավ կորելացված են մասնիկների դետեկտորներում գրանցվող բարձր էներգիայի էլեկտրոնների հոսքերի հետ: Այդպիսով, նախ մենք ճշտեցինք TGE երևույթները՝ բարձր էներգիայի էլեկտրոնների, գամմա ճառագայթների և նեյտրոնների հոսքերի միաժամանակյա գրանցմամբ, այնուհետև դիտարկեցինք

ռելյատիվիստական փախչող էլեկտրոնների հեղեղները (RREA)՝ գրանցելով ամպերից եկող մասնիկների հեղեղները (ամպերի լայնածավալ հեղեղներ), այնուհետև ապացուցեցինք ամպի ստորին դիպոլի գոյությունը, որն էլ արագացնում է էլեկտրոններին դեպի ներքև: Այնուհետև իրականացրել ենք մթնոլորտային ուժեղ էլեկտրական դաշտերում էլեկտրոնների տարածման մոդելավորումները և գնահատել ամպրոպային մթնոլորտում պոտենցիալների առավելագույն տարբերությունը (լարումը) ապացուցելով փախչող երևույթների ծագումը և միայն դրանից հետո ներկայացնում ենք TGE-ի համապարփակ մոդելը և RREA-ի ծագման ապացույցը ամպրոպային մթնոլորտում: Գերմանիան, Սլովակիան, Չեխիան, Բուլղարիան և Խորվաթիան, օգտագործելով SEVAN տիպի դետեկտորներ (SՃՖ-ում պատրաստված), նպաստում են երկրորդային տիեզերական ճառագայթների վարիացիաների ավելի լավ ըմբռնմանը: SEVAN դետեկտորը եզակի սարք է, որը կարող է դիտարկել Արեգակի վրա կատաղի պոռթկումների հետևանքով մասնիկների հոսքերի մոդուլյացիան, կանխատեսել Տիեզերական եղանակի վտանգավոր հետևանքները և կատարել լայն հետազոտական ծրագիր մթնոլորտային ֆիզիկայի հիմնարար ասպեկտներում: Վերջին տասնամյակի ընթացքում մթնոլորտում բարձր էներգիայի ֆիզիկայի հետազոտությունները հիմնականում կենտրոնացած էր էլեկտրաֆիկացված մթնոլորտից մասնիկների հոսքերի չափման վրա (ամպրոպային վերգետնյա ավելացումներ TGE-ներ և Terrestrial gamma flashes, TGFs) և դրանց ծագումը բացահայտելու: 2021 թ. սկսեցինք ուսումնասիրել մթնոլորտային էլեկտրական դաշտերը մասնիկների հոսքերով, որոնք անցնում են ամպրոպներով և գրանցվում Երկրի մակերեսին՝ մասնիկների սպեկտրումետրերում: Մենք օգտագործում ենք մասնիկների հոսքերն ամպրոպային մթնոլորտը գննելու համար (ինչպես օրինակ ռենտգենյան գնումն է): Այս նոր մոտեցումը տալիս է շատ հետաքրքիր արդյունքներ երբեմն հակասելով մթնոլորտային էլեկտրական դաշտի ուղղահայաց պրոֆիլի մասին տարածված տեսակետներին, սակայն հիմնված է մասնիկների ֆիզիկայի ճշգրիտ մեթոդների և էլեկտրամագնիսական փոխազդեցությունների լավ հաստատված տեսությունների վրա: Ելնելով մշակված մեթոդաբանությունից՝ մենք հաստատում ենք էլեկտրոնների արագացման մոդելը մթնոլորտային ուժեղ էլեկտրական դաշտերում: Արագածում էլեկտրոնների և գամմա ճառագայթների չափված և մոդելավորված հոսքերի համեմատությունները (ուղղահայաց էլեկտրական դաշտի պրոֆիլի պարզեցված մոդելներով) ցույց են տալիս, որ մթնոլորտում զարգացող RREA-ները հանգեցնում են պարամետրերի բավականին լայն տիրույթ ունեցող TGE-ների:

Այնուհետև, օգտագործելով Արագածի և Lomnický Štít-ում (Սլովակիա) SEVAN դետեկտորներում գրանցված ամենամեծ TGE-ները, գնահատեցինք առավելագույն հասանելի լարումն այդ գագաթների վրա, որոնք համապատասխանաբար 300 և 500 ՄՎ են: Այնուհետև օգտագործում ենք «մյուռնային հոսքերի» մոդուլյացիան ուժեղ մթնոլորտային էլեկտրական դաշտերով՝ բացահայտելու «մյուռնների հոսքերի նվազման երևույթը» և դրանից եզրակացություն անում մթնոլորտային էլեկտրական դաշտերի խաթարումների վերաբերյալ: Եվ վերջապես, Արեգակնային նեյտրոնային սպեկտրոմետրի (ASNT) 24/7 գործողությամբ մենք բերում ենք պարզ հավասարում՝ երկրի մակերևույթից վերև գտնվող ուժեղ էլեկտրական դաշտի բարձրությունը գնահատելու համար: TGE-ների և կայծակների պարպումների հեռավորությունների կորելացիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ TGE մասնիկների հոսքը շատ ավելի բարձր է, քան ենթադրվում էր: Ամպրոպային մթնոլորտում մասնիկների հոսքը, որի մեծ մասը հասնում է Երկրի մակերևույթին, կազմում է վայրկյանում  $\approx 10^{18}$  մասնիկ՝ 100 կԷՎ-ից բարձր էներգիայով: Նման հզոր ճառագայթումը կարող է ազդել երկրային կլիմայի և կլիմայի գլոբալ փոփոխության վրա: Տիեզերական ճառագայթների և մթնոլորտային ֆիզիկայի

սիներգիան կարող է դառնալ առաջատար ուղղություն մթնոլորտային ֆիզիկայի հետազոտության մեջ՝ բացատրելով մասնիկների բոլոր տեսակի պոռթկումները մեկ շրջանակում, այսինքն՝ որպես մթնոլորտային ընդարձակ հոսքերի հետևանքներ: 2019-2021 թթ. չափված էներգետիկ սպեկտրները ցույց են տալիս շատ մեծ էլեկտրական դաշտեր (մինչև 200 կՎ/մ) Երկրի մակերևույթի մոտ (50-150 մ), ինչը կարող է ազդել ամպրոպի ժամանակ հրթիռների արձակման և օդանավերի շահագործման անվտանգության վրա: 2021-2022 թթ. SEVAN ցանցի գործարկումը նոր հետաքրքիր արդյունքներ է ցույց տալիս: 2021 թ. սեպտեմբերի 12-ին SEVAN դետեկտորը Lomnicky S`tit-ում (Սլովակիա) չափել է ցածր էներգիայի ամպրոպային վերգետնյա ավելացում (TGE) 500% ուժեղացմամբ: Աշխարհի ամենամեծ TGE-ն, որը մասնիկների հոսքերով գերազանցում են նորմալ ֆոնային տեմպը 100 անգամ, նույնպես չափվել է Սլովակիայի SEVAN դետեկտորով 2017 թ.: Սլովակիայի SEVAN դետեկտորն օգտագործվում է հելիոսֆերայի մագնիսական դաշտի, մթնոլորտային էլեկտրական դաշտի, ինչպես նաև կայծակնային ակտիվություն և երկրորդական տիեզերական ճառագայթների հոսքերի չափման համար: 2022թ. շարունակել ենք հետազոտական ծրագիրը՝ էլեկտրոնների, ֆոտոնների և մյուսների հոսքերի, ինչպես նաև եղանակային պարամետրերի, էլեկտրական ու մագնիսական դաշտերի շարունակական 24/7 գրանցմամբ բոլոր տեղամասերում (տարբեր լայնություններ, երկայնություններ, բարձրություններ)՝ գրանցվող տվյալները մուտքագրելով ՏՃՖ-ի տվյալների բազաներ: Բոլոր մասնակից երկրների ֆիզիկոսները կարող են օգտագործել տվյալները՝ ՏՃՖ սերվերների վրա ADEI հարթակում հասանելի բազմաչափ վիզուալիզացիայի և վերլուծության մշտապես թարմացվող հարթակը իրենց և համատեղ աշխատանքի համար: Այժմ, բացի ՏՃՖ տվյալների բազաներից, Արագածի դետեկտորներից ստացված բազմամյա տվյալները ցուցադրվում են "Mendeley" տվյալների հավաքածուներում, որոնք այժմ պարունակում են նաև TGE էլեկտրոնների սպեկտրները Արագածի համայնապատկերային տեսախցիկների կողմից գրանցված կապույտ-ուլտրամանուշակագույն լույսի պատկերների հետ համընկմամբ և նաև մթնոլորտի ստորին հատվածում օպտիկական արտանետումների և մասնիկների կարճ ավելացումների մասին, որոնք գրանցված են Արագածի նեյտրոնային մոնիտորով: Այս տվյալների հավաքածուները պարունակում են երկար գրառումներ և հղումներ դեպի տվյալների շտեմարաններ, որոնք թույլ են տալիս HEPA համայնքին օգտագործել Արագածի չափումները՝ մթնոլորտային ֆիզիկայի բազմաթիվ խնդիրների հետազոտությունների համար: 2022 թ. հրապարակել ենք մի շարք հոդվածներ CERN-ի վրա հիմնված Instrumentation ամսագրում (JINST), որտեղ մանրամասն նկարագրված են մասնիկների դետեկտորների և դաշտային հաշվիչների ցանցերը, որոնք օգտագործվել են վերջին տասնամյակում ամպրոպների ժամանակ մասնիկների ուժեղացված հոսքերի չափման համար: Հատուկ ուշադրություն է դարձվել, թե ինչպես ենք չափում TGE էլեկտրոնների էներգիայի սպեկտրները ASNT սցինտիլացիոն սպեկտրոմետրով, որը կարևոր չափում է HEPA-ի համար:

Սույն թվականի հոկտեմբերի 8-ց հոկտեմբերի 13-ը տեղի ունեցավ դոկտոր Յոհաննես Կնապպի (DESY) այցելությունը ԱԱԳԼ: Յոհաննես Կնապպը հանդիսանում է ՏՃՖ բաժանմունքում իրականացվող 21AG-1C012 ծածկագրով առաջատար հետազոտությունների նախագծի արտասահմանյան գործընկերը: Այցի շրջանակներում քննարկվեցին ծրագրի իրականացված աշխատանքները, ինչպես նաև ընթացիկ ու հետագա անելիքները:

2 տարվա ընդմիջումից հետո, այս տարի հոկտեմբերի 17-ից 20-ը Չեխիայի հանրապետության մայրաքաղաք Պրահայում կազմակերպել և անցկացրել ենք TEPA 2022 ամենամյա ավանդական կոնֆերանսը, որին մասնակցել և զեկույցներով են հանդես եկել Ա. Զիլինգարյանը՝ 1 զեկույց, Տ. Կարապետյանը՝ 2 զեկույց և Բ. Սարգսյանը՝ 1 զեկույց:

Հարկ է նշել նաև, որ այս տարի երիտասարդ գիտնականների համար ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության կողմից հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթում Բ. Սարգսյանը արժանացել է մրցանակի *Քիմիա և երկրի մասին գիտություններ* անվանակարգում:


2022թ. իրականացվել է նաև գիտատեխնիկական ենթակառուցվածքների արդիականացում, վերանորոգում, նոր ցանցային սարքավորումների գործարկում և այլն, որոնց ցանկը բերված է ստորև.

- ✓ Վերանորոգվել են Նոր Ամբերդ գիտական կայանի գլխավոր շենքի 1-ին հարկի նախամուտքն ու աշխատանքային սենյակները:
- ✓ Արագած և Նոր Ամբերդ բարձր լեռնային գիտական կայանների համար ձեռք են բերվել նոր հզոր դիզելային գեներատորներ:
- ✓ Արագածի և Նոր Ամբերդի փորձարարական սարքերի և սերվերների համար անխափան սնուցման սարքեր (UPS) տվյալների հոսքերի անխափան հավաքման համար:
- ✓ Ցանցային սարքավորումների արդիականացում՝ Արագածի և Նոր Ամբերդի գիտահետազոտական կայանների հետ հուսալի ռադիո-ինտերնետ կապեր հաստատելու համար:
- ✓ Ստեղծվել է 2 հատ նոր 4 մուտքանի լոգարթմական անալոգաթվային փոխարկիչներ (LogADC) fast synchronized data acquisition system (FSDAQ)-ով, համապատասխան ծրագրային ապահովմամբ SEVAN մոդուլի համար, ինչը թույլ կտա չափել մթնոլորտային մասնիկների հոսքերի էներգիայի սպեկտրները 0.3 -50 ՄէՎ էներգիայի միջակայքում:
- ✓ 2022թ-ի հոկտեմբեր 21-ից նոյեմբերի 5-ը DESY (Ցոյտեն , Գերմանիա) գործուղված ՏՃՖ բաժանմունքի ղեկավար Ա. Չիլինգարյանի, Տ. Կարապետյանի և Բ. Սարգսյանի կողմից հավաքվել և նոր պատրաստված 4 մուտքանի լոգարթմական անալոգաթվային 1 փոխարկիչ տեղադրվել է վերը նշված քաղաքում առկա SEVAN դետեկտորի վրա, տեղադրվել են համապատասխան ծրագրային ապահովումը, կատարվել են տրամաչափման աշխատանքներ և գործարկվել է դետեկտորը: Այժմ դետեկտորն աշխատում է, իսկ տվյալները օնլայն ռեժիմով հավաքվում են նաև ՏՃՖ-ի տվյալների բազա: 2023թ-ի ամռանը պլանավորվում է դետեկտորը տեղափոխել Ցուգսպիցե լեռան վրա, մթնոլորտային երևույթների գրանցման ու հետազոտությունների համար: Այցի ընթացքում կատարվել է նաև Համբուրգում տեղակայված մյուս SEVAN դետեկտորի տրամաչափման աշխատանքները:
- ✓ Ստեղծվել է մեծ լուծողունակությամբ 1 մուտքանի լոգարթմական անալոգաթվային փոխակերպիչ (LogADC fast synchronized data acquisition system (FSDAQ)-ով), համապատասխան ծրագրային ապահովմամբ ինքնավար NaI(Tl) -սպեկտրոմետրերի համար, ինչը թույլ կտա չափել մթնոլորտային մասնիկների հոսքերի էներգիայի սպեկտրները 0.3 -50 ՄէՎ էներգիայի միջակայքում:
- ✓ Նոր Ամբերդում՝ մասնիկների հոսքերի չափման նոր լաբորատորիա (SEVAN դետեկտորով և NaI(Tl) սպեկտրոմետրով, էլեկտրական դաշտի (EFM100) և եղանակային պարամետրերի (Vantage Pro2 Plus) գրանցիչով):
- ✓ Իրականացվել է կայծակների տեղակայման համաշխարհային ցանցի հանգույցի արդիականացում Երևանում:
- ✓ Նոր Ամբերդում և Բյուրականում նոր սերվերների տեղադրում տվյալների պահպանման և վերլուծության համար:

- ✓ Ստեղծվել է նոր փոքր լաբորատորիա Արագածում՝ մթնոլորտի ստորին հատվածում օպտիկական արտանետումների չափման համար:
- ✓ Արագած լեռան լանջերին և Նոր-Ամբերդում փորձարարական սարքերի շուրջօրյա շահագործում 24/7 ռեժիմով:
- ✓ Սկսել ենք նոր փորձ՝ ամպրոպների ժամանակ մթնոլորտային էլեկտրական դաշտի հորիզոնական պրոֆիլի հետազոտության համար:
- ✓ Սկսել ենք 3 համայնապատկերային տեսախցիկներով փորձ Արագածի վերևում գտնվող երկինքը վերահսկելու և մթնոլորտում ուժեղ էլեկտրական դաշտերի և էլեկտրոնային հոսքերի հետ համընկնող հանելուկային լույսերի լուսանկարներ պատրաստելու համար;
- ✓ Մշակել մեթոդաբանություն և գնահատել ամպրոպի ժամանակ մթնոլորտային էլեկտրական դաշտի ուղղահայաց պրոֆիլը:
- ✓ Նոր Ամբերդում հիմնել սերվերային կենտրոն՝ տվյալների բազաները պահելու և տվյալների պահպանման հուսալիության բարձրացման համար:
- ✓ Բուրականում հիմնել ենք նոր փորձարարական հաստատություն՝ որը ներառում է SEVAN դետեկտոր, NaI(Tl) սպեկտրոմետր, էլեկտրական դաշտի (EFM100) և եղանակային պարամետրերի (Vantage Pro2 Plus) գրանցիչներ:
- ✓ Սկսվել են աշխատանքները ADEI բազմաչափ վիզուալիզացիայի և վիճակագրական վերլուծության նոր ծրագրի ստեղծումը թարմացված LINUX օպերացիոն համակարգում աշխատացնելու ուղղությամբ:

SEVAN դետեկտորի արդիականացման՝ դետեկտորը սպեկտրոմետրի վերածելու և Ցուգսպիցե լեռան վրա տեղադրելու, ինչպես նաև տրամաչափման և շահագործման հանձնելու համար DESY-ից 2022թ.-ին ստացել ենք դրամաշնորհ 48000 Եվրո գումարի չափով:

## Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժին



### *Ղեկավար՝ Ռ. Դալլաքյան*

Բաժանմունքի գործունեությունը նվիրված է բժշկական իզոտոպների արտադրության տեխնոլոգիաների և սարքավորումների մշակմանն ու արտադրությանը: Աշխատանքներ են տարվում հետևյալ ռադիոակտիվ իզոտոպների հետազոտման ուղղությամբ՝  $^{99m}\text{Tc}$ ,  $^{67}\text{Ga}$ ,  $^{68}\text{Ga}$ ,  $^{64}\text{Cu}$ :

- $^{99m}\text{Tc}$

Կատարվել են բնական մոլիբդենի թիրախի փորձնական ճառագայթումներ ցիկլոտրոնի պրոտոնային փնջի վրա: Չափվել է ստացված տեխնեցիումի տեսակարար ակտիվությունը, առաջացած կողմնակի ռադիոիզոտոպների տեսակները, ակտիվությունները:

Փորձնականորեն ապացուցվել է կենտրոնախույս էքստրակցիոն մեթոդի աշխատունակությունը  $^{99m}\text{Tc}$ -ի ցիկլոտրոնային ստացման դեպքում: Այս ուղղությամբ պաշտպանվել է ԱԱԳԼ մագիստրոսական թեզ Դ. Արշակյանի կողմից: Երկարատև աշխատանքներից հետո վերջապես հաջողվել է ստանալ ՄԷԿ-ում լուծված տեխնեցիում, առանց մոլիբդենի հետքերի: Մաքրությունը ստուգվել է սպեկտրոֆոտոմետրիայի մեթոդով՝ Կիրառական ֆիզիկայի բաժանմունքի աշխատակիցների օգնությամբ: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Նախատեսվում է ձեռք բերել հարստացված  $^{100}\text{Mo}$ , պատրաստել թիրախ և կատարել ճառագայթումներ:

Մշակվել և պատրաստվել է ճառագայթված նյութերը ճառագայթման ավարտից հետո փորձարարական դահլիճից դուրս բերման ավտոմատ ռոբոտային համակարգ: Այն ծրագրավորված ռոբոտ-մեքենա է, որն ունակ է ինքնուրույն վերցնել թիրախը և գծին հետևելու սկզբունքով դուրս գալ բարձր ռադիացիոն ֆոն ունեցող դահլիճից լաբորիթի միջով դեպի ապահով վայր: Թիրախի տեղաշարժման հեռակառավարվող աշտարակը ենթարկվել է համապատասխան ձևափոխությունների՝ համաձայն կազմված նախագծի, որպեսզի համապատասխանի տարհանման ռոբոտի հետ համակցված աշխատանքին: Տեղադրվել է նոր շարժիչ: Կատարվել են որոշակի մեխանիկական փոփոխություններ և մեխանիկական մասի թարմացում: Մաքրի կառավարման համար պատրաստվել է հեռակառավարման վահանակ, որը կարող է աշխատել ցիկլոտրոնի շենքում տեղակայված հեռակառավարման սենյակից:

Մշակվել և պատրաստվել է կենտրոնախույս գոիչի համակարգչային հեռակառավարման համակարգի նախատիպ, որը թույլ է տալիս իրականացնել տեխնեցիումի գտման և ռադիոֆարմապրեպարատի սինթեզի աշխատանքները հարակից սենյակից համակարգչի օգնությամբ՝ առանց աշխատակցի՝ ռադիոակտիվության հետ շփման անհրաժեշտության:

Այս թեմայով ընթացքի մեջ է ՀՀ ԿԳՄՍ Գիտության Կոմիտեի դրամաշնորհային ծրագիր՝ «Բժշկական իզոտոպների արտադրության սարքավորման ավտոմատացում և ռոբոտացում» վերնագրով: Աշխատանքների արդյունքները ներկայացվել են վերը նշված թեմայի հաշվետվության մեջ և հաստատվել:

Արդյունքները պատրաստվում են հրատարակման:

- $^{68}\text{Ga}$

Շարունակվում են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (IAEA) և 12 երկրների գիտահետազոտական ինստիտուտների և արտադրող ընկերությունների հետ

համատեղ  $^{68}\text{Ga}$  իզոտոպի արտադրության ուղղված աշխատանքները: Ծրագրի շրջանակում որպես նվեր ստացվել են թանկարժեք հարստացված թիրախի նյութ ( $^{68}\text{Zn}$ ) և անհրաժեշտ կատիոնափոխանակիչ քիմիական խեժ: Կատարվել են բնական  $\text{Zn}$  թիրախի վրա 17.6 ՄԷՎ էներգիայով պրոտոններով հարուցված ռեակցիաների կտրվածքների և ստացվելիք ակտիվությունների տեսական հաշվարկներ TALYS և SRIM ծրագրային կոդերով: Մշակվել և պատրաստվել են ցինկե թիրախներ (հատուկ պատրաստված բարակ թիրախների հավաքածուներ), կատարվել են փորձնական ճառագայթումներ: Տեսական և փորձնական հետազոտությունների արդյունքում որոշվել է ցինկե թիրախի օպտիմալ հաստությունը, արտադրված  $^{68}\text{Ga}$  տեսակարար ակտիվությունը: Սկսվել են ցինկե թիրախից գալիումի քիմիական անջատման հետազոտությունները կատիոնափոխանակիչ խեժի միջոցով: Մշակվել և պատրաստվել է նոր երկրաչափությամբ թիրախի հենարան: Շնորհիվ դրա մեծացված մակերեսի՝ այն ունակ է դիմանալ ավելի ինտենսիվ ճառագայթման հոսանքներին, հետևաբար իզոտոպների ավելի մեծ արտադրության: Սա կարևորագույն խնդիր է իզոտոպների արտադրության պրոցեսում: Աշխատանքը զեկուցվել է ոլորտի առաջատար գիտաժողովում (առցանց)՝ 18th Workshop on Targetry and Target Chemistry, 21-26 August, 2022, Canada, արստրակտը հրատարակվել գիտաժողովի արստրակտների գրքում <https://meetings.triumf.ca/event/108/page/150-abstract-booklet-pdf>: Այս թեմայով ընթացքի մեջ են երկու դրամաշնորհային ծրագրեր՝ « $^{68}\text{Ga}$  բժշկական իզոտոպի պինդ թիրախով ցիկլոտրոնային արտադրության տեխնոլոգիայի մշակում,  $[\text{68Ga}]\text{GaCl}_3$  ստացում» և "Production of cyclotron-based Gallium-68 radioisotope and related radiopharmaceuticals" վերնագրերով, ՀՀ ԿԳՄՍ Գիտության Կոմիտեի և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (IAEA) կողմից հաստատված, համապատասխանաբար:

Աշխատանքների արդյունքները ներկայացվել են վերը նշված թեմաների հաշվետվություններում և հաստատվել: IAEA Coordinated Research Project F22073, "Production of cyclotron-based Gallium-68 radioisotope and related radiopharmaceuticals", Research Contract No: 24305 ծրագրի հաջորդ տարվա փուլը հաստատվել է և ֆինանսավորումը տրամադրվել է ԱԱԳԼ-ին:

Այս հետազոտությունները հանդիսանում են հայցորդ Արմինե Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության հիմքը՝ ղեկավար Անի Ապրահամյան:

Արդյունքները պատրաստվում են հրատարակման:

- $^{67}\text{Ga}$

$^{67}\text{Ga}$  իզոտոպի փորձնական ստացման վերաբերյալ գիտական հոդվածը լույս տեսավ 2021 թ. ընթացքում: Քիմիական զտման և թիրախի պատրաստման խնդիրները նույնն են, ինչ-որ  $^{68}\text{Ga}$  իզոտոպի դեպքում: Կատիոնափոխանակիչ խեժով քիմիական զտման և սինթեզի աշխատանքները, որոնք արդեն մեկնարկել են, կձառայեն նաև  $^{67}\text{Ga}$ -ի արտադրության տեխնոլոգիայի մշակման նպատակին: Աշխատանքները շարունակվում են:

- $^{64}\text{Cu}$

Մշակվել է  $^{64}\text{Cu}$  իզոտոպի ստացման նպատակով կատարվելիք գիտափորձերի մեթոդիկա: Մշակվել և պատրաստվել է համապատասխան թիրախի հենարանը (նյութի ընտրություն, փորձարկումներ)՝ արժաթապատված պղնձե հենարան: Կատարվել է փորձնական ճառագայթում, չափվել է առաջացած  $^{64}\text{Cu}$ -ի տեսակարար ակտիվությունը: Մշակվում է ճառագայթված թիրախի լուծման հեռակառավարվող համակարգ: Այս ուղղությամբ



նախատեսվում է թեկնածուական ատենախոսության պաշտպանություն՝ հեռակա ասպիրանտ Անդրանիկ Մանուկյան, ղեկավար՝ Անի Ապրահամյան:

Արդյունքները պատրաստվում են հրատարակման:

Ցիկլոտրոնի պրոտոնային փնջով ճառագայթումներ պլանավորող և կատարող ԱԱԳԼ և ԵՊՀ միջուկային ֆիզիկայի ամբիոնի խմբերին ցուցաբերվում է անհրաժեշտ տեխնիկական և մասնագտական օգնություն բաժնի աշխատակիցների կողմից: Ապահովվում է անհրաժեշտ պարամետրերի փնջեր այդ գիտափորձերի համար:

Կիրառական ֆիզիկայի խմբում կատարվում են էլեկտրոնային արագացուցչի վակուումային պայմանների ստացման աշխատանքներ՝ Խաչիկ Հարությունյանի գլխավորությամբ: Աշխատանքները մոտ են ավարտին: Աշխատանքային ռեժիմի ստացման դեպքում անմիջապես կվերսկսվեն մալուխային միակցման դետալների ճառագայթումները:



## Հաշվողական ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաներ բաժին (ՀՖՏՏ)

*Ղեկավար՝ Ն. Ակոպով*

Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի **Հաշվողական Ֆիզիկայի և Տեղեկատվական Տեխնոլոգիաների (ՀՖՏՏ)** բաժնի

աշխատանքներն իրականացվում են երկու հիմնական ուղղություններով՝

ա. համակարգչային տեխնիկայի սպասարկում և ծրագրային ապահովում,

բ. բարձր էներգիաների մասնիկների ֆիզիկայի բնագավառում ստացված տվյալների մշակում (Belle II, HERMES գիտափորձեր):

### **ա. համակարգչային տեխնիկայի սպասարկում և ծրագրային ապահովում**

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները տվյալների պահպանման կենտրոնի ստեղծման ուղղությամբ (**Data Preservation Hub**), որն իր մեջ պետք է ներառի HERA արագացուցչի HERMES գիտափորձի 1993-2007 կուտակված տվյալները: Այս աշխատանքները կարևոր նշանակություն ունեն նաև JLAB գիտական կենտրոնի որոշ աշխատանքների պլանավորման համար, որտեղ ԱՄԳԼ-ն կարող է ունենալ գործուն մասնակցություն:

Հաշվետու տարվա ընթացքում Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակներում նախատեսվում է մեծացնել ինտերնետ արտաքին կապուղու թողունակությունը՝ այն հասցնելով 3 Գբ/վ: Այդ նպատակով, ԱՄԳԼ-ում սկսվել են ներքին ցանցի արդիականացմանն ուղղված աշխատանքներ, որոնք նպատակ ունեն մեծացնելու ցանցի թողունակությունը: Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում, վերագործարկվել և կատարելագործվել է **eduroam** ինտերնետային ցանցին ԱՄԳԼ հասանելիությունը, ինչը թույլ է տալիս ԱՄԳԼ աշխատակիցներին օգտվել **eduroam WiFi** կապից, ինչպես ՀՀ-ում այնպես էլ միջազգային գիտական կենտրոններ և համալսարաններ գործողումների ընթացքում:

Տեղադրվել և բոլոր անհրաժեշտ ծրագրային փաթեթներով հագեցվել է **“SuperMicro”** հաշվողական մեքենան, որը թույլ է տալիս իրականացնել բարդ հաշվարկներ, ինչպես տեսական, այնպես էլ փորձարարական ֆիզիկայի բնագավառում: Այն թույլ է տվել, զգալիորեն կրճատել հիմնական հաշվողական համակարգի (`compute.yerphi.am`) ծանրաբեռնվածությունը՝ բարդագույն հաշվարկները տեղափոխելով **“SuperMicro”** հաշվողական մեքենա: Հետագայում նախատեսվում է մեքենան ինտեգրել կենտրոնացված հաշվողական համակարգին՝ վերջինս համալրելով 24 cores, ~800GB RAM լրացուցիչ ռեսուրսով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են նաև ծրագրային ապահովման և նոր հաշվողական փաթեթների տեղադրման աշխատանքներ, մասնավորապես, թարմացվել է `compute.yerphi.am` մեքենայի ծրագրային ապահովման համակարգը (Ubuntu 22.04 LTS), ինչպես նաև նորացվել են ROOT, Geant4 հաշվողական փաթեթները:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՖ և ՏՏ բաժանմունքի աշխատակիցները մասնակցել են մի շարք սեմինար-քննարկումների, մասնավորապես Ա. Ալլահվերդյանի խմբի հետ համատեղ քննարկվել են մոլեկուլային դինամիկայի սիմուլյացիային նվիրված հարցեր (Verlet's

algorithm), ինչպես նաև այդ հաշվարկները իրականացնելու համար դիտարկվել են GPU կիրառություններին նվիրված հարցեր (մեքենայական ուսուցման ալգորիթմներ և այլն):

Հաշվետու տարվա ընթացքում ՀՖ և SS բաժանմունքի աշխատակիցների կողմից իրականացվել են WiFi սարքերի, տեսախցիկների տեղադրման և LAN կապուղու օպտիմիզացիային ուղղված մեծածավալ աշխատանքներ:

**բ. բարձր էներգիաների մասնիկների ֆիզիկայի բնագավառում ստացված տվյալների մշակում (Belle II, HERMES գիտափորձեր)**

Ֆիզիկայի տվյալների մշակման, արդյունքների ստացման և ներկայացման ուղղությամբ, հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են մեծածավալ աշխատանքներ: Մասնավորապես խմբի ԱԱԳԼ-Բեյլե2 խմբի երիտասարդ աշխատակիցներ Հազարավարդ Ղումարյանը և Գայանե Ղևոնդյանը պարբերաբար հանդես են եկել զեկույցներով Բեյլե2 կոլաբորացիայի գլոբալ և աշխատանքային հավաքներին՝ ներկայացնելով իրենց հետազոտությունների արդյունքները, իսկ խմբի երիտասարդ անդամ Ծովինար Կարապետյանը, ԵՊՀ-ում գերազանցությամբ պաշտպանել է իր դիպլոմային աշխատանքը՝ նվիրված Բեյլե2 գիտափորձում տվյալների ընտրման համար օպտիմալ սահմանափակումների ուսումնասիրությանը: Հաշվետու տարվա ընթացքում Գայանե Ղևոնդյանը հրավիրվել է Էդինբուրգի համալսարանի ներկայացնելու ARICH գրանցիչի էֆֆեկտիվության համար ստացած արդյունքները, իսկ Վարդ Ղումարյանը, հաշվետու ժամանակահատվածում մեկնել է Բիլբաո, իրականացնելու հետազոտություններ խմբի միջազգային գործընկերոջ՝ պրոֆ. Գունար Շնեյլի հետ:

